ԼԳԲՏ+ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2024 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՏԱՐԵԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ

Շապիկի պատկերում օգտագործված է Untitled Tbilisi-ի Երևանում կազմակերպված The blue of high zenith միջոցառումից լուսանկար:
Լուսանկարի հեղինակ՝ Վիկտոր Զատիկյան

Տարեկան զեկույց. ԼԳԲՏ+ անձանց մարդու իրավունքների վիճակը Հայաստանում 2024 թ. ընթացքում

Կազմել է «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ն՝ Շվեդիայի ֆինանսական աջակցությամբ (մայիս, 2025 թ.):
Նյութի բովանդակության համար պատասխանատու են հեղինակները, և այն պարտադիր չէ, որ արտահայտի Շվեդիայի կառավարության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 4

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 6

ԲԱԺԻՆ 1

ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ 8

Պետության պարտավորությունները մարդու իրավունքների ապահովման և խտրականության կանխարգելման ուղղությամբ 9

2024 թ.-ի ընթացքում միջազգային կառույցների և մեխանիզմների կողմից պետությանը ներկայացված հանձնարարականների ընթացքը 10

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԶԵՐԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ 15

ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻՑ ԿԱՄ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻՑ ԶԵՐԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ 18

Սեռական բռնություն 21

ՄԱՍՆԱՎՈՐ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ 23

Ընտանեկան բռնություն սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով 24

Ֆիզիկական բռնություն 35

Հոգեկան ներգործություն. անձնական կյանքին վերաբերող տեղեկատվության տարածում կամ սպառնալիք 36

Շորթում 37

Մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի ոտնահարման այլ դեպքեր 39

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 41

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ 45

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 48

ԲԱԺԻՆ 2

ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԼԳԲՏ+ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ 50

Ատելության խոսքի կարգավորումները 51

Ներպետական իրավակարգավորումները 54

ԼԳԲՏ+ անձանց խնդիրների շահարկումը և ատելության խոսքը 2024 թ.-ի ընթացքում 55

Սահմանադրության փոփոխության հարց 56

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում լրացումների քննարկումներ 58

Տրանսգենդեր անձը մասնակցել է գեղեցկության մրցույթի 59

Ճնշում պատգամավոր Հովիկ Աղազարյանի նկատմամբ 60

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 62

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 64

ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Բիսեքսուալ (երկսեռական)	Անհատ, որը զգացմունքային և/կամ սեռական գրավչություն ունի մեկից ավելի սեռերի/գենդերների նկատմամբ:
Գեյ	Նույնասեռական տղամարդ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ կամ հարաբերությունների ցանկություն ունի տղամարդու հետ:
Գենդերային արտահայտում	Անձի՝ իր իսկ (կամ այլոց կողմից ընկալվող) գենդերային ինքնության դրսևորումը:
Գենդերային ինքնություն	Անհատի՝ իր իսկ գենդերի ընկալումն է և անհատական փորձը, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան ժամանակ հաստատված սեռին: Այն սոցիալական ինքնության կատեգորիա է և վերաբերում է անհատի նույնականացմանը որպես տղամարդ, կին կամ այլ գենդեր:
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԼԳԲՏ, ԼԳԲՏ+, ԼԳԲՏԻ	Լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր կամ տրանս (ինտերսեքս, «+»-ը կիրառվում է ներառական լինելու բոլոր տեսակ ոչ հետերոնորմատիվ ինքնությունների համար):
Լեսբի	Նույնասեռական կին, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ կամ հարաբերությունների ցանկություն ունի կնոջ հետ:
Կոնվերսիոն պրակտիկա	Ցանկացած գործողություն է այլ մարդկանց կողմից, որն ուղղված է մարդու սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության փոփոխությանը՝ ոչ հետերոսեքսուալից դեպի հետերոսեքսուալ, ոչ հետերոնորմատիվ գենդերային ինքնությունից և արտահայտումից դեպքի հետերոնորմատիվ:
Հետերոսեքսուալ (տարասեռական)	Անհատ, որ խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ կամ հարաբերությունների ցանկություն ունի այլ գենդերի անձանց հետ:
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
Հոմոֆոբիա	Վախ, անհիմն զայրույթ, անհանդուրժողականություն կամ ատելություն նույնասեռականության նկատմամբ: Ներառական եզր է. հաճախ ներառում է նաև տրանսֆոբիան (տե՛ս ստորև):

ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
Նույնասեռական	Անհատ, որ խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ կամ հարաբերությունների ցանկություն ունի նույն սեռի և/կամ գենդերի անձանց հետ:
ՌԱԵՀ	Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով:
Սեռ	Անհատի կենսաբանական ստատուսն է որպես արական, իգական կամ ինտերսեքս: Որոշվում է այնպիսի չափորոշիչներով, ինչպիսիք են սեռական քրոմոսոմները, գոնադները, արտաքին ու ներքին սեռական օրգանները: Օգտագործվում է նաև որպես անձի ծննդյան պահին արձանագրված սեռ:
Սեռական կողմնորոշում	Անհատի խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջությունը, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունները կամ հարաբերությունների ցանկությունը այլ անհատի հետ:
ՍԿԳԻ	Սեռական կողմնորոշում և գենդերային ինքնություն և/կամ գենդերային արտահայտում:
Տրանս կամ տրանսգենդեր	Անձ, ում գենդերային ինքնությունը և/կամ գենդերային արտահայտումը տարբերվում է ծննդյան պահին հաստատված սեռից: Կարող է կիրառվել նաև որպես հովանի եզրույթ՝ ներառելով այլ ոչ հետերոնորմատիվ գենդերային ինքնություններ:
Տրանսֆոբիա	Բացասական մշակութային և անձնական համոզմունքներ, կարծիքներ, վերաբերմունք և վարքագծեր, որոնք հիմնված են տրանս անձանց կամ գենդերային ինքնության և գենդերային արտահայտումների վարիացիաների հանդեպ նախապաշարումների, զզվանքի, վախի կամ ատելության վրա:
Քվիր	Նախկինում դիտվել է որպես ոչ հետերոսեքսուալ կենսակերպ ունեցող անձանց հովանի եզրույթ, իսկ այնուհետև վերածվել հակահինքնության, որը բնութագրում է ցանկացած անձի այնպիսի գործողությունների իրականացումը, որոնք հակառակ են ընդունված նորմերին, լեգիտիմությանն ու դոմինանտությանը, և նպատակ են հետապնդում դիմադրելու, մերժելու, ապակառուցելու և այլաշրջելու նորմալությունն ու հետերոնորմատիվությունը որպես ճնշման համակարգեր: Ներկայումս դիտարկվում է նաև որպես անձանց ինքնություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2024 թ.-ին «Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը շարունակել է ԼԳԲՏ+ անձանց շահերի պաշտպանությանն ուղղված գործունեությունը մի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ապահովմանն ուղղված ջատագովության և ծառայությունների տրամադրման, մյուս կողմից՝ համայնքի հզորացման և հասարակության իրազեկվածության բարձրացման միջոցով: Սույն զեկույցը հանդիսանում է հերթական տարին ամփոփող փաստաթուղթը, որտեղ տեղ են գտնում կազմակերպության կողմից շահառուներին տրամադրվող իրավական և սոցիալական աջակցության ընթացքում դուրս բերված տվյալները, ինչպես նաև հրապարակային դաշտում ԼԳԲՏ+ անձանց թիրախավորող խոսքի մշտադիտարկման արդյունքները:

Այսպես, զեկուցի առաջին մասը վերաբերում է մարդու իրավունքների խախտումների դեպքերին և դրանցում արտացոլված օրինաչափությունների վերլուծությանը: Յուրաքանչյուր ենթաբաժնում նկարագրված է տվյալ իրավունքի էությունը և շրջանակը, որի համաձայն գնահատվել է արձանագրված դեպքը: Այնուհետև, ներկայացված են դեպքերի նկարագրությունները և նրանց վերլուծությունը՝ համապատասխան եզրահանգումներով:

2024 թ.-ի ընթացքում արձանագրվել են անմարդկային, արժանապատվություն նվաստացնող վերաբերմունքից և պատժից զերծ լինելու իրավունքի, մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի, կրթության իրավունքի, աշխատանքի իրավունքի խախտումներ: Այս իրավունքների խախտումները պայմանավորված են եղել տուժած անձանց սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ, հետևաբար, դրանք դիտարկում ենք որպես խտրականությունից զերծ լինելու իրավունքի խախտման հետ զուգորդված դեպքեր:

2024 թ.-ի ընթացքում կազմակերպության իրավական ու սոցիալական աջակցության դիմումների թիվը 365 է: Այդ դիմումներից իրավախախտումների արձանագրված դեպքերի ընդհանուր թիվը կազմում է 65, որոնցից 38-ը ընտանեկան բռնության դեպքեր են: Ինչպես ամեն տարի, այս տարի ևս ընտանեկան բռնության դեպքերը մեծամասնություն են կազմում: Այսպես, արձանագրվել է նաև ֆիզիկական բռնության 5 դեպք, սեռական բռնության 2 դեպք, հոգեկան ներգործության 3 դեպք, շորթման 5 դեպք, մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի այլ ոտնահարումների 4 դեպք, կրթական հաստատություններում ճնշումների 3 դեպք, աշխատանքային հարաբերություններում խտրականության 4 դեպք և 1 կողոպուտի դեպք: Նշենք, որ դեպքերից 8-ը կազմակերպության կողմից փաստագրվել են 2025 թ.-ի սկզբին, սակայն տեղի են ունեցել 2024 թ.-ի ընթացքում, այդ իսկ պատճառով տեղ են գտել այս զեկույցում:

Հարկ է նշել, որ չնայած նրան, որ տարվա ընթացքում արձանագրված իրավախախտումների ցուցանիշը նախորդ տարիների համեմատ աճել է, զուգահեռաբար նվազել է իրավապահ մարմիններին դիմելու ցանկությունը: Մասնավորապես, արձանագրված դեպքերից միայն 10-ի դեպքում են տուժողները դիմել իրավապահ մարմիններին: Դրանցից 3-ը ընտանեկան բռնության դեպքեր են, որոնց դեպքում բռնարարի նկատմամբ կիրառվել է նախազգուշացում: Դրանցից մեկի պարագայում տուժողի կողմից ներկայացվել է հաղորդում, ինչի քննությունը, սակայն, անհայտ է: Հաջորդ դեպքը, որի պարագայում տուժողը

դիմել է իրավապահ մարմիններին, դանակահարության դեպք է, որի քննությունը դեռևս գտնվում է ընթացքի մեջ: Մյուս երեք դեպքերը հոգեկան ներգործության դեպքեր են, որոնցից մեկի հաղորդման քննության ընթացքի վերաբերյալ որևէ տեղեկություն չկա, իսկ երկուսը գտնվում են դեռևս նախաքննության փուլում: Ոստիկանություն են դիմել նաև երկու շորթման դեպքերի տուժողներ, որոնցից մեկը հետագայում հրաժարվել է բողոքից՝ համաձայնության գալով իրավախախտի հետ, իսկ մյուսին ոստիկանությունը որևէ աջակցություն չի տրամադրել, ինչի արդյունքում իրավախախտը իրականացրել է սպառնալիքը: Վերջին դեպքը վերաբերել է տուժողին կողոպտելուն, սակայն վերջինը հրաժարվել է բողոքից՝ համաձայնության գալով իրավախախտի հետ: Այսինքն, նշյալ 65 դեպքերից քննվում են միայն 3-ը:

Այս իրավիճակը, ինչպես բազմիցս ներկայացվել է տարբեր հարթակներում, նախ և առաջ պայմանավորված է իրավապահ համակարգի նկատմամբ անվստահությամբ՝ ելնելով հետևյալ հանգամանքներից՝

- Գործերի քննության երկար ժամկետներ և արդյունքի բացակայություն,
- Իրավապահների կողմից տուժողների նկատմամբ ծաղրի, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքեր,
- Տուժողի անձնական կյանքին վերաբերող տեղեկատվության տարածման դեպքեր:

Զեկույցում նկարագրված է նաև Հայաստանի կողմից ստանձնած պարտավորությունների և դրանց շուրջ մարդու իրավունքների միջազգային մարմիններին ներկայացված զեկույցների էությունը: Պարտավորությունները մի կողմից ներառում են օրենսդրական փոփոխությունների հանձնառություններ, մյուս կողմից՝ գործնականում դրանց արդյունավետ կիրառում և որոշակի քաղաքականությունների ընդունում: Հակիրճ նկարագրված են նաև 2024 թ.-ի ընթացքում օրենսդրական փոփոխությունների շուրջ առկա զարգացումները:

Զեկույցի երկրորդ մասը վերաբերում է ատելության խոսքին: Այս հատվածում, մասնավորապես, նկարագրված է ատելության խոսքի հասկացությունը և անհրաժեշտ կարգավորման շրջանակը, այս պահին առկա ներպետական կարգավորումները և տարվա ընթացքում արձանագրված տարբեր ծանրություն և վտանգավորության տարբեր աստիճան ունեցող ատելության խոսքի դրսևորումները: Ատելության խոսքը հատկապես հանդիպում է սոցիալական ցանցերում և լրատվամիջոցների հրապարակումներում և հաջորդում է ԼԳԲՏ+ անձանց հետ կապված որևէ դեպքի կամ իրադարձության:

Ատելության խոսքի դրսևորումները ներկայացնելիս և մեջբերելիս ընտրվել են ատելություն և անհանդուրժողականություն՝ ներառյալ բռնության կոչեր կամ բռնության արդարացում պարունակող խոսքի ընդամենը մի հատված: Ներկայացվել են նույնաբովանդակ մեկնաբանությունների օրինակներ: Չեն ընդգրկվել նաև այն արտահայտությունները, որոնցում եղել են հայհոյանքներ:

Զեկույցի երկրորդ բաժնում ատելության խոսքի օրինակների մեջբերման համար հայցում ենք ընթերցողի ներողամտությունը և տեղեկացնում, որ դրանք կարող են առաջացնել հոգեբանական ճնշվածություն և ընկճում:

ԲԱԺԻՆ 1.
ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Պետության պարտավորությունները մարդու իրավունքների ապահովման և խտրականության կանխարգելման ուղղությամբ

Մարդու իրավունքները համընդհանուր են, անքակտելի և անփոխանցելի: Յուրաքանչյուր անձ իր ծննդյան պահից մինչև մահ օժտված է մարդու իրավունքներով և ազատություններով՝ անկախ որևէ անձնական կամ սոցիալական հանգամանքից: Հայաստանի Հանրապետությունը՝ որպես իրավական պետություն, պետք է ապահովի իր տարածքում գտնվող բոլոր անձանց իրավունքների անխափան իրացումը: Միևնույն ժամանակ, պետության կողմից մարդու իրավունքների իրացման ապահովումը ենթադրում է ոչ միայն պետական օղակների գործունեության վերահսկում, դրանց կողմից մարդու իրավունքների խախտումների կանխարգելում, այլ նաև պատշաճ արձագանք երրորդ անձանց կողմից դրսևորվող ոտնձգություններին: Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային փաստաթղթերը, դրանց հիման վրա գործող դատական կամ արտադատական ատյաններն ու այլ մեխանիզմները իրենց պրակտիկայում զարգացրել են այն միջոցառումները, որոնք պետության կողմից պետք է ձեռնարկվեն մարդու իրավունքների իրացումն ապահովելու համար: Այդ միջոցառումները ենթադրում են մի կողմից նեգատիվ պարտավորություններ, երբ պետությունը պետք է ձեռնպահ մնա մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ որևէ ոտնձգությունից, և մյուս կողմից՝ պոզիտիվ պարտավորություններ, երբ պետությունը պետք է ձեռնարկի մարդու իրավունքների պաշպանությանն ուղղված քայլեր: Այսպիսով՝

Պետությունը պարտավոր է հարգել մարդու իրավունքները, այսինքն՝ զերծ մնալ մարդու իրավունքների ոտնահարումներից (պետության նեգատիվ պարտականությունը): Անհատի իրավունքների խախտումներ չպետք է թույլ տրվեն պետական մարմինների, ներառյալ՝ իրավապահ մարմինների աշխատակիցների և պետական լիազորությամբ օժտված այլ անձանց կողմից[1]:

Պետությունն ունի նաև պոզիտիվ պարտավորություն՝ **պաշտպանելու անհատի իրավունքները երրորդ անձանց խախտումներից**: Այս պարտավորության ներքո պետությունը պետք է կանխի անհատի իրավունքների խախտումները տարբեր ֆիզիկական անձանց, կազմակերպությունների կողմից: Սա իրենից ենթադրում է նաև գործուն իրավական մեխանիզմների ստեղծում իրավունքների խախտումները արդյունավետ քննելու, խախտված իրավունքները վերականգնելու, խախտմամբ պատճառված վնասները հատուցելու ուղղությամբ:

Պետության հաջորդ պոզիտիվ պարտավորությունը **իրավունքների իրացման միջավայր ստեղծելն է**: Պետական իշխանությունը պետք է ձևավորի այնպիսի իրավական մեխանիզմներ և հասարակական միջավայր, որտեղ անձինք կկարողանան անխոչընդոտ իրացնել իրենց հիմնարար ազատությունները:

ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության առաջնային երաշխավորը երկրի բարձրագույն օրենքն է՝ ՀՀ Սահմանադրությունը, որը ամրագրում է, որ մարդու իրավունքները գործում են անմիջականորեն[2]: ՀՀ-ում մարդու իրավունքների գերակայությունը միաժամանակ ճանաչված է միջազգային պայմանագրերով և դաշնագրերով[3]:

1 ՀՀ սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, հոդված 3. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723
2 Նույն տեղում, հոդված 3, կետ 3
3 Նույն տեղում, հոդված 5, կետ 3

Հայաստանի Հանրապետությունը, անդամակցելով միջազգային կազմակերպությունների, ինչպիսիք են՝ Միավորված ազգերի կազմակերպությունը և Եվրոպայի խորհուրդը, ինչպես նաև վավերացնելով այդ կազմակերպությունների շրջանակներում մշակված փաստաթղթերը, ստանձնել է հստակ պարտավորություններ, որոնց կատարման ուղղությամբ պարբերաբար հաշվետու է համապատասխան մարմինների առաջ: Մասնավորապես, ՄԱԿ-ի շրջանակներում գործում են մարդու իրավունքների պայմանագրային մարմինները՝ 10 կոմիտեները, որոնք ձևավորվել են տարբեր իրավունքների վերաբերյալ դաշնագրերի հիման վրա: Կոմիտեները դիտարկում են ոչ միայն ներկայացվող զեկույցները, այլ նաև քննում են անհատական դիմումներ մասնավոր անձանցից՝ իրենց իրավունքների խախտումների վերաբերյալ: ՄԱԿ-ի շրջանակներում են գործում նաև հատուկ ընթացակարգերը և անկախ փորձագետները, որոնք իրենց մանդատի շրջանակներում կարող են տեղեկատվություն պահանջել պետությունից մարդու իրավունքների իրավիճակի և ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ: Պետության կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունավետության կամ ձախողումների վերաբերյալ զեկույցներ այս մարմիններին կարող են ներկայացվել նաև հասարակական կազմակերպությունների կողմից: Ներկայացված տեղեկատվության և դրան հաջորդող քննարկումների հիման վրա պետությանն են ներկայացվում առաջարկներ՝ առկա խնդիրների վերացման ուղղությամբ անհրաժեշտ քայլերի շուրջ:

2024 թ.-ի ընթացքում միջազգային կառույցների և մեխանիզմների կողմից Հայաստանում մարդու իրավունքների իրավիճակի դիտարկման ընթացքը

«Փինք» իրավապաշտպան ՀԿ-ն հետևում է մարդու իրավունքների միջազգային մարմինների կողմից մարդու իրավունքների իրավիճակի դիտարկման շրջափուլերին և ներկայացնում ոլորտային զեկույցներ Հայաստանում ԼԳԲՏ+ անձանց մարդու իրավունքների իրավիճակի, պետության կողմից մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովելու նպատակով ձեռնարկված միջոցառումների, թերացումների և ձախողումների վերաբերյալ: Այնուհետև, կազմակերպությունը հետամուտ է լինում մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մեխանիզմների միջոցով պետությանը ներկայացված հանձնարարականների կատարման մշտադիտարկմանը և այդ ուղղությամբ պետությանն աջակցելու շուրջ հնարավոր համագործակցության ձևավորմանը:

2024 թ.-ի ընթացքում ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների հարցերով կոմիտեին կազմակերպությունը ներկայացրել է զեկույց Հայաստանում ԼԳԲՏ+ երեխաների իրավունքների վերաբերյալ, մասնավորապես, անչափահաս անձանց նկատմամբ ընտանեկան բռնության, կրթության իրավունքի խախտումների և պետության կողմից այս հարցերի ուղղությամբ անգործության վերաբերյալ:

Ինչպես պարզ է դառնում սույն և նախկին զեկույցներից, տարվա ընթացքում արձանագրված դեպքերի մեծամասնությունը ընտանեկան բռնության դեպքեր են: Միևնույն ժամանակ դրանցում առանձնանում են անչափահաս անձանց նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերը, որոնց պարագայում տուժողին

իրավական աջակցության տրամադրումը գրեթե անհնար է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ տուժողի օրինական ներկայացուցիչը, այսինքն՝ ընտանեկան բռնությունների պարագայում՝ բռնարարը, պետք է լիազորի փաստաբանին՝ տուժողին իրավապահ մարմինների առաջ ներկայացնելու համար: Մյուս կողմից, հաճախ, երբ խոսքը վերաբերում է ԼԳԲՏ+ անձանց, գործ ենք ունենում հոգաբարձության և խնամակալության մարմնի կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի կենտրոնների ոչ կոմպետենտ, հոմոֆոբ վերաբերմունքին: Նախորդ տարիներին արձանագրվել են նաև դեպքեր, երբ ընտանեկան բռնությունից տուժած երեխային նվաստացուցիչ վերաբերմունքի են արժանացրել հենց այս հաստատությունների աշխատակիցները, ինչը պետության կողմից անուշադրության մատնելը վնասում է ոչ միայն տվյալ դեպքերում տուժողներին, այլ նաև հանգեցնում է համակարգային ոչ արդյունավետ աշխատանքի և թե՛ իրավական, թե՛ ֆինանսական չարաշահումների:

Կրթության ոլորտում ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ թե այլ աշակերտների, և թե ուսուցչական կազմի կողմից ճնշումները երկար տարիներ բարձրաձայնվել են, սակայն մինչ օրս որևէ գործուն միջոց պետության կողմից չի ձեռնարկվել: Հատկապես մտահոգիչ է այն հանգամանքը, որ հաճախ ճնշումների, վատ վերաբերմունքի ու անպաշտպան մնալու արդյունքում երեխաները իրենց կամքով հրաժարվում են շարունակել ուսումը՝ արդյունքում բախվելով սոցիալական խնդիրների ամբողջ կյանքի ընթացքում: Երկար տարիների ընթացքում կրթության իրավունքի խախտումների բացասական արդյունքը արդեն տեսանելի է ԼԳԲՏ+ շատ անձանց շրջանում, ովքեր զրկվել են մասնագիտական կրթության, այնուհետև՝ աշխատանքի հնարավորությունից և հայտնվել սոցիալապես ծանր վիճակում:

Հայաստանում ԼԳԲՏ+ անձանց սոցիալ-տնտեսական իրավունքների վերաբերյալ զեկույց է ներկայացվել *ՄԱԿ-ի մարդու իրավունքների բարձր քաղաքական ֆորումին*, որտեղ քննարկվում է ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից բխող միջոցառումների իրագործման ընթացքը: Ներկայացվել է, մասնավորապես, ԼԳԲՏ+ անձանց կրթության, աշխատանքի, բնակարանային ապահովության իրավիճակը, դրանց խախտումների հետևանքով առաջացած ծանր պայմանները և այն անհրաժեշտ քայլերը, որ պետությունը պետք է ձեռնարկի դրանք արդյունավետ կերպով հասցեավորելու նպատակով:

Զեկույց է ներկայացվել նաև ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման 7-րդ շրջափուլի ընթացքում՝ շեշտադրելով Հայաստանում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության, ատելության հիմքով հանցագործության և ատելության խոսքի իրավիճակը՝ թե օրենսդրական բացերի, թե պրակտիկայում ծագող խնդիրների առումով: Զեկույցում ներառվել են նաև տրանսգենդեր անձանց առանձնահատուկ կարիքներին վերաբերող իրավակարգավորումների բացերը և դրանց հետևանքները: Հարկ է նկատել, որ Կազմակերպության կողմից այս մեխանիզմը կիրառվում է արդեն երրորդ անգամ և նախորդ երկու շրջափուլերի արդյունքում պետությանն են ներկայացվել առաջարկներ՝ կապված ԼԳԲՏ+ անձանց համար խտրականությունից արդյունավետ իրավական պաշտպանություն նախատեսող օրենսդրության ընդունման, ատելության հիմքով հանցագործությունների կարգավորման և դեպքերի արդյունավետ քննության շուրջ, ինչի ուղղությամբ պետությունը ոչ օրենսդրական, ոչ իրավակիրառ պրակտիկայում փոփոխություններ չի իրականացրել: Բացառություն են կազմում քրեական օրենսգրքի նոր

ձևակերպումները, որոնցով հնարավորություն է տրվում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով կատարված հանցագործությունները որակել որպես ծանրացնող հանգամանքներում կատարված: Սակայն, գործնականում, իրավիճակը մնում է անփոփոխ: Համընդհանուր պարբերական դիտարկման քննարկումները կանցկացվեն և վերջնական զեկույցը հասանելի կլինի 2025 թ.-ին:

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (այսուհետ՝ ԵԱՀԿ) Մարդու իրավունքների և ժողովրդավարական ինստիտուտների գրասենյակը (այսուհետ՝ ԺՀՄԻԳ) ամեն տարի հրապարակում է անդամ պետությունների, ներառյալ՝ քաղաքացիական հասարակության կողմից ներկայացված ատելության հիմքով հանցագործությունների տվյալներ: Զեկույցը, մասնավորապես, արտացոլում է խոցելի խմբերի իրավիճակը՝ անձնական կամ սոցիալական որևէ հատկանիշի նկատմամբ ատելության և կողմնակալության շարժառիթով կատարված քրեական իրավախախտումների վերլուծության հիման վրա:

2024 թ.-ի նոյեմբերի 16-ին հրապարակված տվյալների համաձայն՝ 2023 թ.-ի ընթացքում Հայաստանում արձանագրված ատելության շարժառիթով կատարված հանցագործությունների թիվը կազմում է 52, որից 49-ը ԼԳԲՏ+ անձանց դեմ ուղղված հանցագործություններն են՝ նրանց սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության և/կամ արտահայտման պատճառով (այսուհետ՝ ՍԿԳԻ)[4]: Հարկ է նկատել, որ անցյալ տարվա իրավիճակը գրեթե չէր տարբերվում. ԺՀՄԻԳ-ին էր ներկայացվել արձանագրված 53 դեպքի վերաբերյալ տվյալներ, որոնցից 52-ը ԼԳԲՏ+ անձանց դեմ կատարված հանցագործություններն էին:

Չնայած, որ պետության կողմից ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ին են ներկայացվում արձանագրված տվյալներ, դեպքերի նկարագրությունները ցույց են տալիս, որ դրանք հաճախ որպես այդպիսին ատելության հիմքով հանցագործություններ չեն: ԺՀՄԻԳ-ը նկատում է, որ Հայաստանի իրավապահ մարմինները չեն արձանագրում ատելության հիմքով հանցագործությունների դեպքերում կանխակալության ցուցիչները: Ի լրումն, ԺՀՄԻԳ-ը նշում է, որ Հայաստանը կշահի քաղաքացիական հասարակության հետ համագործակցության ամրապնդումից, այդ թվում՝ զոհերին աջակցության տրամադրման հարցում: Նախարարների խորհրդի 9/09 և 13/06 որոշումներում ԵԱՀԿ մասնակից պետությունները պարտավորվել են ակտիվ և ներառական մոտեցում ցուցաբերել քաղաքացիական հասարակության նկատմամբ, որն առանցքային դեր է խաղում ատելության հիմքով հանցագործությունների համապարփակ հասցեավորման գործում: ԺՀՄԻԳ-ը պատրաստ է Հայաստանին տրամադրել համապատասխան աջակցություն՝ այս պարտավորությունների կատարման նպատակով՝ իր համապարփակ ռեսուրսների և ատելության հիմքով հանցագործությունների գրանցման և տվյալների հավաքագրման հարցերում, ինչպես նաև հետագա ռեսուրսների և աջակցության միջոցով՝ ուղղված պետական իշխանությունների և քաղաքացիական հասարակության միջև ատելության հիմքով հանցագործությունների դեմ արդյունավետ համագործակցությանը:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն 2024 թ. դեկտեմբերին կրկին քննարկել է Հայաստանի կողմից Օգանեզովան ընդդեմ Հայաստանի գործով վճռից բխող պարտավորությունների կատարման ընթացքը:

4 OSCE/ODIHR hate crim report: Armenia. https://hatecrime.osce.org/armenia

2022 թ.-ի մայիսի 17-ին հրապարակվել էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը 2012 թ.-ին «ԴԻ Այ Ուայ» ակումբի պայթեցման վերաբերյալ Օգանեզովան ընդդեմ Հայաստանի գործով[5]: ՄԻԵԴ-ը եզրակացրել էր, որ Հայաստանի կողմից խախտվել է դիմումատուի՝ խոշտանգումներից, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ լինելու և խտրականությունից զերծ լինելու իրավունքները՝ մի կողմից օրենսդրական բացերի, մյուս կողմից, գործի քննության անարդյունավետության պատճառով:

Հայաստանի Հանրապետությունն այժմ գտնվում է Դատարանի վճռի կատարման փուլում, որի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն է: Վճռի կատարումից բխող անհրաժեշտ գործողությունների առաջարկները ներկայացվել էին ոչ միայն պետական մարմիններին, այլ նաև Նախարարների կոմիտեին՝ արդյունավետ դարձնելու համար վճռի կատարման գործընթացի նկատմամբ վերահսկողությունը:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն 06.06.2023 թ.-ին քննելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Օգանեզովան ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման ընթացքը, ձեռնարկված միջոցների արդյունավետությունը, պետությանը տվել էր երկու տարի ժամանակ՝ իրականացնելու գործողությունների պլանով նախատեսվածը: Այնուամենայնիվ, սույն թվականի դեկտեմբերի կայացած հանդիպման ընթացքում, Կոմիտեն որոշում կայացրեց պետությանը պարտավորեցնել, նախ և առաջ, արագ և արդյունավետ կերպով վերջացնել «ԴԻ-Այ-Ուայ» ակումբի պայթեցման վերաբացված գործի քննությունը՝ ապացույցների կորստից և անպատժելիությունից խուսափելու նպատակով[6]: Որպես ընդհանուր միջոցներ, պետությունը պարտավորվում է.

- Ստեղծել ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ տարանջատված տվյալների հավաքագրման համակարգ, ներառյալ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության (ՍԿԳԻ) հիմքով կատարված հանցագործությունները, և ներկայացնել թարմացված վիճակագրական տվյալներ՝ ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի վերաբերյալ ներկայացված բողոքների, նախաձեռնված հետաքննությունների, դատարան ուղարկված գործերի և դրանց արդյունքների վերաբերյալ:
- Ներկայացնել իրավապահ մարմինների և ազգային դատարանների պրակտիկայի օրինակներ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես են կիրառվում Քրեական օրենսգրքի դրույթները ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի վերաբերյալ:
- Շարունակել վճռական գործողություններ ձեռնարկել՝ հստակ «զրո հանդուրժողականություն» ուղերձ հղելով խտրականության, ատելության խոսքի և բռնության ցանկացած ձևի նկատմամբ, մասնավորապես՝ ԼԳԲՏԻ անձանց դեմ, և շարունակել բարձրացնել հանրային իրազեկվածությունը ամենաբարձր մակարդակով և հասարակության լայն շրջանակներում՝ ԼԳԲՏԻ անձանց կողմից զգացած խտրականության և նախապաշարմունքի վերաբերյալ՝ նրանց ընդունման խթանման և հասարակության մեջ լիարժեք ներգրավվածությանը խոչընդոտող արգելքները վերացնելու նպատակով:

5 ՄԻԵԴ վճիռ Օգանեզովան ընդդեմ Հայաստանի. https://hudoc.echr.coe.int/eng?i=001-219523
6 Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1514 հանդիպման ընթացքում կայացված որոշում Օգանեզովան ընդդեմ Հայաստանի վճռի կատարման վերաբերյալ https://search.coe.int/cm?i=0900001680b29654

Կոմիտեն ողջունել է նաև այս ոլորտում ոստիկանության համար կարողությունների զարգացման միջոցառումները, ատելության հանցագործությունների և խտրականության դեմ պայքարի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի համապատասխան ուղեցույցների ադապտացիան և թարգմանությունը, ինչպես նաև դրանք ոստիկանության վերապատրաստման մշտական ուսումնական ծրագրերում ներառելու իշխանությունների մտադրությունը: Կոմիտեն նաև խրախուսում է հետագա համագործակցությունը Եվրոպայի խորհրդի հետ:

Կոմիտեն ողջունել է «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագծի մշակման գործընթացում արձանագրված առաջընթացը, սակայն խրախուսել է իշխանություններին առաջնահերթություն տալ ԼԳԲՏԻ անձանց պաշտպանությանն այս օրինագծում՝ միջազգային չափանիշների համապատասխան և այս գործով Դատարանի եզրակացությունների համաձայն, և տեղեկացնել դրա ընդունման առաջընթացի մասին:

Այս գործողությունների կատարման ընթացքի հետագա քննությունը կիրականացվի հաջորդ հանդիպումների ընթացքում՝ մինչև 2026 թ.-ը:

Այսպիսով, պետությունը դեռ պետք է շարունակի Քրեական նոր օրենսգրքի արդյունավետ կիրառման ուղղությամբ աշխատանքը՝ այն ԼԳԲՏ+ անձանց համար արդյունավետ իրավական պաշտպանության մեխանիզմ դարձնելու համար, ինչպես նաև պետք է շարունակի «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագծի ընդունման գործընթացը՝ այն համապատասխանեցնելով միջազգային ստանդարտներին և հանձնարարականներին: Սույն զեկույցում տեղ գտած դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս 2024 թ.-ի ընթացքում ԼԳԲՏ+ անձանց իրավական պաշտպանության մակարդակը:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԶԵՐԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 29[7]

Խտրականությունից զերծ լինելու իրավունքը մարդու բացարձակ իրավունք է և ենթակա չէ որևէ սահմանափակման: Այն ճանաչված է ինչպես մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված միջազգային փաստաթղթերով, այնպես էլ ՀՀ Սահմանադրությամբ:

Մարդու իրավունքների վերաբերյալ բոլոր գլխավոր փաստաթղթերը ևս սահմանում են մարդու իրավունքների՝ առանց խտրականության իրացվելու հնարավորությունը: Դրանով ընդգծվում է անձի՝ խտրականությունից զերծ լինելու իրավունքի համամարդկային և արժեքավոր էությունը[8]:

Միջազգային իրավունքում խտրականությունը բնութագրվում է որպես ցանկացած բացառում, տարբերակում կամ նախապատվություն, որը հիմնված է կոնկրետ հանգամանքի կամ հատկանիշի վրա, և որը նպատակ ունի սահմանափակել անձի իրավունքների և ազատությունների ճանաչումը կամ իրացումը կամ հանգեցնում է նման սահմանափակումների[9]: Այլ կերպ ասած՝ խտրականությունը նույնանման իրավիճակում գտնվող անհատների նկատմամբ տարբերակված վերաբերմունքն է առանց որևէ ողջամիտ կամ օբյեկտիվ հիմքի[10]:

Միջազգային իրավունքում որպես խտրականության տեսակ առանձնացվում է ուղղակի խտրականությունը, երբ անհատը տարբերակված վերաբերմունքի է արժանանում նման իրավիճակում գտնվող այլ անձանց համեմատությամբ, ինչի պատճառը տվյալ անհատի որևէ անձնական, սոցիալական կամ այլ բնույթի հատկանիշն է[11]: Անուղղակի խտրականությունը առերևույթ չեզոք դրույթ է, չափանիշ կամ գործելակերպ, որը կարող է որևէ խմբի անձանց համար որոշա-

7 ՀՀ սահմանադրություն, 2015 թ. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723
8 ՄԱԿ-ի կանոնադրություն, Հոդված 1 (3) և 55, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 7. ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագիր, հոդված 2, 4 (1) և հոդված 26, ՄԱԿ-ի Սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների մասին դաշնագիր, հոդված 2, Երեխաների իրավունքների պաշտպանության կոնվենցիա, հոդված 2, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիա, հոդված 14, և դրան կից 12-րդ արձանագրություն.
9 ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 18 ընդհանուր մեկնաբանություն, § 7. https://www.refworld.org/docid/453883fa8.html
10 Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Բելգիայում կրթության մեջ լեզուների օգտագործման մասին օրենքի որոշ ասպեկտների վերաբերյալ գործով 23.07.1968 թ.-ի վճիռ,. Վիլիսն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 36042/97, § 48, ՄԻԵԴ 2002-IV, Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով վճիռ, թիվ. 40094/05, 02/01/2013.
11 Հակախտրականությունը միջազգային իրավունքում. 20112-ի ձեռնարկ, պ. 17-18. https://www.interights.org/handbook/index.html

կի անշահավետ պայմաններ ստեղծել այլոց համեմատ[12]: Մեկ այլ տեսակ է ասոցացված խտրականությունը, երբ խտրական վերաբերմունքի է արժանանում այն անձը, ով չնայած չունի խտրականությունից պաշտպանվող հատկանիշը, սակայն կապված է այդ հատկանիշը կրող անձի հետ[13], օրինակ՝ նրա ամուսինը, մայրը, հայրը և այլոք:

Խտրականությունը պայմանավորվում է անձի հատկանիշով, որը կոչվում է խտրականության հիմք: Ո՛չ ՀՀ Սահմանադրությունը և ներպետական օրենքները, ո՛չ միջազգային պայմանագրերի մեծ մասը ուղղակիորեն չեն նախատեսում ՍԿԳԻ-ն խտրականությունից պաշտպանվող հիմքերի մեջ: Այնուամենայնիվ, ներպետական օրենսդրության մեջ խտրականությունից պաշտպանվող հիմքերի ցանկը բաց է. իրավական ակտերը չեն բացառում ուղղակիորեն նախատեսված հիմքերից զատ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ, որոնք կարող են տարբերակված վերաբերմունքի թիրախ հանդիսանալ: Սա նշանակում է, որ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը կարող են և պետք է դիտարկվեն որպես անձնական և սոցիալական այլ բնույթի հանգամանքներ և հավասարաչափ պաշտպանվեն խտրականությունից, ինչպես սեռը, ռասան, հաշմանդամությունը: Մարդու իրավունքների պայմանագրերի վրա գործող մարմինները բազմիցս վերահաստատել են այս պնդումը՝ սահմանելով, որ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ամբողջությամբ տեղավորվում են խտրականությունից պաշտպանվող հատկանիշների շարքում[14]:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունը պետք է հարգի անձի՝ խտրականությունից զերծ լինելու իրավունքը: Այն պետք է պաշտպանի ԼԳԲՏ անձանց պետական մարմինների ներկայացուցիչների՝ կառավարության, ոստիկանության, քննչական մարմինների աշխատակիցների ոտնձգություններից: Հավասարության ապահովումը միայն պետական մարմինների կողմից խախտումներից զերծ մնալը չէ, ուստի պետությունը պետք է ստեղծի այնպիսի միջավայր, որ մասնավոր անձանց կողմից ևս թույլ չտրվեն ԼԳԲՏ անհատների իրավունքների ոտնահարումներ՝ պայմանավորված վերջիններիս սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ: Դեռ ավելին, նման ոտնահարումների դեպքերը պետք է պատշաճ քննության արժանանան, իսկ ոտնձգողները՝ պատժվեն:

Միևնույն ժամանակ, չնայած նրան, որ խտրականության արգելքի վերաբերյալ դրույթներ են պարունակվում մի շարք ոլորտային օրենսդրական ակտերում[15], Հայաստանի Հանրապետությունում դեռևս չկա առանձին օրենք, որը կսահմանի խտրականության հասկացությունը, դրա տեսակները, արդյունավետ մեխանիզմ կնախատեսի խտրականության նկատմամբ առավել խոցելի խմբերի պաշտպա-

12 ԵՄ Եվրոպական խորհրդի հրաման 2000/43/EC, 29.06.2000, Հավասար վերաբերմունքի սկզբունքի կիրառումը անձանց միջև՝ անկախ ռասայական կամ էթնիկ ծագումից, հոդված 2(2), կետ (b). https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex%3A32000L0043

13 Մոլա Սալին ընդդեմ Հունաստանի, ՄԻԵԴ Մեծ պալատ, 2018 թ.; ՄԻԵԴ վճիռներ Գուբերնիան ընդդեմ Խորվաթիայի, 2016 թ. § 78; Սկորյանեցն ընդդեմ Խորվաթիայի, 2017 թ. § 55; Վելերն ընդդեմ Հունգարիայի, 2009 թ. § 37.

14 ՄԻԵԴ վճիռներ. Իդեմտոբան և այլոք ընդդեմ Վրաստանի, 2015 թ. § 96; Սալգիրո դը Սիլվա Մուտան ընդդեմ Պորտուգալիսայի, 1999 թ. § 28; Ֆղետեն ընդդեմ Ֆրանսիայի, 2002 թ. § 32; Վեջելանդը և այլոք ընդդեմ Շվեդիայի, 2012 թ. § 55; Խոշտանգումների դեմ կոմիտեի ընդհանուր մեկնաբանություն թիվ 2. Հոդված 2-ի կիրառումը անդամ պետությունների կողմից, § 21, 22. https://www.ohchr.org/en/documents/general-comments-and-recommendations/catcgc2-general-comment-no-2-2007-implementation

15 Խտրականության առանձին օրենքի անհրաժեշտության վերաբերյալ հետազոտություն. Վահե Գրիգորյան, Արա Ղազարյան. https://epfarmenia.am/sites/default/files/Document/Is_it_expedient_to_adopt_separate_antidiscrimination_law_research_2015_Arm.pdf

նության համար: Մասնավորապես, արդյունավետ կիրառման հնարավորություն ընձեռող օրենքը նախ և առաջ պետք է՝

- նախատեսի խտրականությունից պաշտպանվող հատկանիշների շարքում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության ներառումը՝ հաշվի առնելով անձանց այդ հատկանիշներով պայմանավորված իրավախախտումների ծավալը,
- նախատեսի խտրականության տեսակների համապարփակ ցանկը,
- նախատեսի հանրային շահի պաշտպանության հայցով դատարան դիմելու՝ հասարակական կազմակերպությունների իրավասուբյեկտությունը՝ իրենց շահառուների իրավունքների պաշտպանությունն արդյունավետորեն իրականացնելու նպատակով,
- նախատեսի անկախ հավասարության մարմնի ձևավորման կարգն ու գործառույթները՝ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կազմից դուրս, ապահովելով մարմնի անդամների ներկայացուցչական բազմազանությունը,
- նախատեսի մասնավոր մարմինների կողմից դրսևորված խտրականությունից պաշտպանության հնարավորություն,
- նախատեսի խտրականության դեպքերի քննության ընթացքում ապացուցման բեռի բաշխման առանձնահատկություն, այն է՝ ենթադրյալ իրավախախտին պարտավորեցնի ապացուցել խտրական շարժառիթի բացակայությունը, ենթադրյալ խտրականության զոհի վրա դնելով միայն առաջին հայացքից խտրականության հիմքերի ներկայացումը:

«Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագիծը արդեն երկար տարիների պատմություն ունի, սակայն դեռևս չի համապատասխանում միջազգային չափորոշիչներին և հատկապես ԼԳԲՏ+ անձանց իրավունքների պաշտպանության առումով մնում է թերի: 2024 թ.-ի ընթացքում նախագծի շուրջ քննարկման փորձերը գրեթե ձախողվել են: Քաղաքացիական հասարակության համար անհասանելի է եղել նախագծի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի վերջին եզրակացությունը, բացի այդ, որևէ նոր առաջարկ կամ քննարկման նախաձեռնում մնացել է անպատասխան: Միևնույն ժամանակ, հայտնի է, որ 2025 թ.-ի սկզբին նախագիծը կուղարկվի ՀՀ Ազգային ժողով: Նախագծի հետ կապված հիմնական խնդիրները մնում են սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության՝ որպես խտրականությունից պաշտպանված հատկանիշների բացակայությունը, կազմակերպությունների համար հանրային շահի պաշտպանության գործերով դատարան դիմելու իրավունքի բացակայությունը, հավասարության մարմնի ոչ արդյունավետ կարգավիճակն ու ձևավորման կարգը, և այլն:

Սույն զեկույցում տեղ գտած մարդու իրավունքների խախտումները զուգորդված են խտրականությամբ: Այսինքն՝ արձանագրված իրավախախտումները տեղի են ունեցել տուժողի սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով:

Ստորև ներկայացված օրինակներում մարդու իրավունքների խախտումները տեսակավորված են ըստ իրավախախտումների, սակայն բոլորը զուգորդված են գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման հիմքով խտրականությամբ:

ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻՑ ԿԱՄ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻՑ ՁԵՐԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

2. Մարմնական պատիժներն արգելվում են:

3. Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 26 մաս 1[16]

Խոշտանգումը ցանկացած գործողություն է, որի միջոցով պետական պաշտոնատար անձը կամ պաշտոնապես հանդես եկող այլ մարդ, կամ նրանց հրահրմամբ և գիտությամբ կամ լռելյայն համաձայնությամբ, որևէ անձին մտածված կերպով հասցվում է ուժեղ ցավ կամ տառապանք՝ մարմնական կամ մտավոր, նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, իր կամ երրորդ անձի կատարած հանցանքի կամ այն գործած լինելու մեջ կասկածելու համար, ինչպես նաև նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ամեն մի այլ պատճառով: Այս բնորոշման մեջ չեն մտնում այն ցավն ու տառապանքը, որոնք ծագում են սոսկ օրինական սանկցիաների պատճառով, անբաժանելի են այդ սանկցիաներից կամ ծագել են դրանցից՝ պատահականորեն[17]: Խոշտանգումներից և դաժան վերաբերմունքից ազատ լինելը անձի բացարձակ իրավունք է և ենթակա չէ սահմանափակման[18]: Որպեսզի դաժան վերաբերմունքն առաջացնի անձի վերոհիշյալ իրավունքի խախտում, անհրաժեշտ է, որպեսզի այն հասնի դաժանության նվազագույն մակարդակի, պետք է հաշվի առնվեն նաև կոնկրետ գործի հանգամանքները, ինչպես, օրինակ, վերաբերմունքի բնույթը, թե ինչ համատեքստում է այն տեղի ունեցել, դրա տևողությունը, ֆիզիկական և հոգեբանական հետևանքները, իսկ որոշ դեպքերում նաև՝ անձի տարիքը, սեռը և առողջական կարգավիճակը[19]: Անհրաժեշտ է տարբերակել խոշտանգումը, անմարդկային վերաբերմունքը և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը, որտեղ խոշտանգումը անձին դիտավորությամբ պատճառված այն վնասն է, որը պատճառել է շատ լուրջ և դաժան տառապանք, մինչդեռ նվաստացնող վերաբերմունք կարող է համարվել այն վերաբերմունքը, որ անձի մոտ առաջացնում է վախի, վտանգի, ստորացված

16 ՀՀ սահմանադրություն, 2015 թ. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723
17 Հոդված 1, «Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ» ՄԱԿ-ի 1984 թ. կոնվենցիա
18 ՄԻԵԴ վճիռ թիվ 2346/02, §49. Փրեթթին ընդդեմ Միացյալ Թագավորության
19 ՄԻԵԴ վճիռ թիվ 33394/96. Փրայսն ընդդեմ Միացյալ Թագավորության; ՄԻԵԴ վճիռ թիվ 13134/87, §30. Կոստելլո-Ռոբերթսն ընդդեմ Միացյալ Թագավորության

լինելու զգացողություններ[20], իջեցնում է անձի հեղինակությունը և դերը, մարդկային արժանապատվությունը կամ ստիպում է անձին գործել իր կամքին կամ խղճին հակառակ[21]: Երբ անձին ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառելը բավարար ծանրության չի հասել կամ չի հետապնդել խոշտանգման սահմանմամբ նախատեսված նպատակ, ապա խոսքը գնում է անմարդկային վերաբերմունքի մասին: Որոշ դեպքերում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունը, սպառնալիքները, նույնպես նվաստացնող վերաբերմունք են համարվում[22]: Այս դեպքերում անհրաժեշտ չէ պետության կողմից դիտավորության առկայությունը անձի անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու իրավունքի խախտման փաստը ճանաչելու համար[23]:

Դեպք 1

2024 թ. փետրվարին մարզային քաղաքներից մեկում գեյ անձը «Գրինդր» հավելվածի միջոցով ծանոթացել է երկու տղաների հետ սեռական հարաբերություն ունենալու նպատակով: Պայմանավորված վայր է եկել մի երիտասարդ և միանգամից խփել նրան, այնուհետև խլել է հեռախոսը և զանգել այլ տղաների: Նրանք եկել են և սպառնացել: Եկողների մեջ եղել է նաև երիտասարդ, ում հետ անձը հարաբերություն է ունեցել նախկինում: Տղաներից մեկի ավտոմեքենայի մեջ դիմողը հանդիպել է նշված տղաներին, և նրանք մեքենան վարել են ամայի և մութ տարածք: Երիտասարդին նորից խփել են, զենք են պահել վրան և ասել, որ պետք է ուղղվի: Ուժի գործադրմամբ խլել են նաև երկրորդ բջջային հեռախոսը և մուտք գործելով վերջինիս անձնական կյանքին վերաբերող տվյալների մեջ, ձեռք են բերել իր հարազատների կոնտակտային տվյալները, ապա՝ անձնագիրը վերցրել են իր ձեռքից: Սպառնացել են, որ եթե հաջորդ օրը իրենց չփոխանցի 1.000.000 ՀՀ դրամ, ապա հարազատներին և ընկերներին կպատմեն իր սեռական կողմնորոշման մասին: Երիտասարդը չունենալով գումար՝ սկսել է մտածել ինքասպան լինելու մասին, գրել է նամակներ և տեղադրել դրանք տարբեր վայրերում, սակայն բռնարարները խլել են նամակներից մեկը և ասել նրան, որ հանկարծ ինքնասպանություն չգործի՝ առաջարկելով գումարը միանգամից փոխանցելու փոխարեն ամեն ամիս 30.000 ՀՀ դրամ վճարել:

Դեպք 2

Նույնասեռական տղամարդը իր թաղամասում թիրախավորվել է բակի տղաների կողմից: Նրանք բացահայտել են տղամարդու սեռական կողմնորոշումը և ուժի գործադրմամբ և իր կամքին հակառակ բռնելով վերջինիս ձեռքերը տարել են Երևան քաղաքում գտնվող շենքերից մեկի նկուղ և ծեծի են ենթարկել, հարվածներ են հասցրել նրա դեմքի շրջանում: Այնուհետև, նրանցից մեկը ուժով վերցրել է նրա բջջային հեռախոսը և մուտք է գործել լուսանկարների բաժին: Այստեղ, տեսնելով անձի և իր գուգընկերոջ սեռական բնույթի մերկ լուսանկարները՝ տարածել է խմբի շրջանում, ինչից հետո բռնություն գործադրողները սպառնացել

20 ՄԻԵԴ վճիռ թիվ 23178/94 Այդինն ընդդեմ Թուրքիայի
21 ՄԻԵԴ թիվ 4715/70, 4783/71 և 4827/71 գործեր. Արևելյան աֆրիկյան ասիացիներն ընդդեմ Միացյալ Թագավորության
22 ՄԻԵԴ թիվ 33985/96 և 33986/96 գործեր. Սմիթը և Գրեդին ընդդեմ Միացյալ Թագավորության
23 ՄԻԵԴ վճիռ թիվ 28524/95. Փիրսն ընդդեմ Հունաստանի, ինչպես նաև խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի հարցերով ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողի U.N. Doc. No. A/56/156 2001 թ. զեկույց

են դրանք հրապարակել: Վերջիններս անձի ինտիմ բնույթի լուսանկարները տարածել են թաղամասում գտնվող տղաների շրջանում և գումար են պահանջել: Սպառնացել են, որ իր բջջային հեռախոսը կամ մեքենան իր ձեռքից վերցնելու են, պահանջել են, որ իրենց գումար տրամադրի կամ իրենց տա իր աշխատավարձի 50 տոկոսը: Սակայն անձը կարողացել է նկուղից դուրս գալ և դիմել փախուստի: Տղամարդը չի ցանկացել դիմել ոստիկանություն, քանի որ իրեն առևանգած և ծեծի ենթարկած անձինք թաղային հեղինակություններ են, և նա վստահ է, որ նրան որևէ պատասխանատվության չեն ենթարկվի:

Դեպք 3

Անձը 13 տարեկանում տեղեկացրել է մորը, որ ունի նույն սեռի նկատմամբ գրավչություններ և նրանից ակնկալել է աջակցություն: Սակայն մայրը զայրացել է նրա վրա՝ փորձելով տանել տարբեր մասնագետների մոտ «ուղղելու նպատակով»: Հոգեբանի մոտ այցից հետո հոգեբանն անձի ողջ պատմածները ներկայացրել է մորը, իսկ նյարդաբանը խոստացել է «բուժել» նրան: 2024 թ. ապրիլին դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին, չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 4

Աղջիկը, ով նույնականանում է լեսբի, գտնվել է ժամանակավոր խնամքի կենտրոնում, որտեղ կատարել է ինքնավնասում: Դրանից հետո նրան տեղափոխել են հոգեկան առողջության կենտրոն, որտեղ նա մնացել է տաս օր: Դուրս գրվելուց հետո աղջիկը կրկին տեղափոխվել է ժամանակավոր խնամքի կենտրոն, որտեղ նոր տեղափոխված անչափահասները չեն շփվել իր հետ: Խնամքի կենտրոնում ապրող երեխաներից մեկը ասել է, որ կենտրոնի տնօրենը բոլոր երեխաներին տեղեկացրել է, որ նա հոգեկան առողջության կենտրոնից է եկել ու «հիվանդ» է, տեղեկացրել է աղջկա սեռական կողմնորոշման մասին և արգելել խնամքի կենտրոնի մյուս սաներին շփվել իր հետ: Աղջիկը դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին 2024 թ. հուլիսին, նաև դիմել է իրավապահ մարմիններին, որոնք տեղափոխել են իրեն այլ ապաստարան:

Դեպք 5

Տղամարդը հաճախել է ՀՀ մարզերից մեկում գործող ՀԿ տարածքներից մեկը՝ հոգեբանական աջակցություն ստանալու համար: Խորհրդատվություններից մեկի ժամանակ, երբ պատմել է նրա մասին, որ ունեցել է նույնասեռ հարաբերությունների փորձառություն, սակայն արդեն բաժանվել է նախկին զուգընկերոջից, հոգեբանը ասել է, որ անձը ճիշտ ուղու վրա է, նույնասեռ հարաբերությունները սխալ են, և նրանք կարող են շարունակել աշխատանքը այդ ուղղությամբ: Անձը հրաժարվել է ծառայություններից, դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին և չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 6

2024 թ. նոյեմբերին տղայի ընկերոջ միջոցով կազմակերպությունը տեղեկացել է, որ իր գեյ լինելը բացահայտելուց հետո տղայի ծնողները նրան բռնության են

ենթարկել, ծեծել են, նվաստացրել, խլել կապի բոլոր միջոցները: Ընկերը տեղեկացրել է նաև, որ դիմելու պահին ընկերը գտնվել է Նորք Մարաշի կլինիկաներից մեկում: Ծնողները նրան ստիպողաբար են տարել կլինիկա՝ «ուղղվելու» համար: Այս ամենի մասին իր ընկերոջը պատմել է կլինիկայի հոգեբանի հեռախոսահամարով գաղտնի զանգահարելով: Նույնասեռական տղան ընկերոջ հետ խոսելիս նշել է նաև, որ իրեն շատ վատ է զգում, և խնդրել, որ որ ընկերը հնարավորինս շուտ փորձի նրան օգնել: Ընկերը նշում է, որ երբ զանգահարել է անձի հորը, որպեսզի տեղեկություն կարողանա ստանալ ընկերոջ մասին՝ ներկայանալով որպես համադասարանցի, հայրը միայն ասել է, որ որդին այս պահին հիվանդանոցում է, քանի որ առողջական լուրջ խնդիրներ ունի: Ընկերը հրաժարվել է ահազանգել ոստիկանություն, քանի որ անչափահաս է:

Սեռական բռնություն

Դեպք 7

Նույնասեռական տղամարդը ՌԴ-ից հեռացել է պատերազմի և ԼԳԲՏ+ անձանց իրավունքները սահմանափակող օրենքների պատճառով: ՀՀ-ում տղամարդը ապրել և աշխատել է մարզային քաղաքում: Ծանրաբեռնվածության պատճառով հոգնել է, քանի որ կատարել է մի քանի հոգու աշխատանք: Սակայն երբ գործատուներին տեղեկացրել է, որ ցանկանում է երկու օրով արձակուրդ վերցնել, հանգստանալ, իրեն ասել են, որ հեռանա, քանի որ աշխատանքից ազատված է: Գալով Երևան՝ անձը «Գրինդր» հարթակի միջոցով հանդիպել է մի տղամարդու, որպեսզի պայմանավորվեն միասին տուն վարձակալելու և վարձը կիսելու մասին: Հանդիպման ժամանակ վերջինս ինչ-որ նյութ է լցրել նրա բաժակի մեջ: Տղամարդը խմել է՝ առանց իմանալու դրա մասին, այնուհետև ոչինչ չի հիշել: Երբ արթնացել է, տեսել է, որ իր իրերը գողացել են, իսկ վարտիքը և շալվարը, իջեցրած են և մարմնի վրա կան սեռական բռնության հետքեր: Տղամարդը չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 8

Կինը կամավորության շրջանակներում մասնակցել է ծրագրի, որտեղ նախատեսված է եղել մասնակցել մարզային քաղաքներից մեկում կազմակերպված հավաքի: Հավաքին մասնակցելու նպատակով նա գնացել է իրեն փոխանցված տան հասցեով: Նշված տանը կինը ենթարկվել է սեռական ոտնձգության, ինչից հետո փողոցում պարբերաբար լսել է վիրավորական խոսքեր և սեռական բնույթի արտահայտություններ: Երբ բարձրաձայնել է իր՝ տարբերվող սեռականության ու գրավչությունների մասին և կիսվել կազմակերպիչների հետ իր վերջին փորձառությամբ, նրան ծաղրել են և ծիծաղել: 2024 թ. հուլիսին դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին, սակայն չի դիմել իրավապահ մարմիններին:

Սույն բաժնում ներկայացված են դեպքեր, որոնք ևս ընտանեկան բռնության, շորթման կամ այլ տեսակի բռնության դրսևորումներ են, սակայն այս պահին

հայտնի հանգամանքների վերլուծությամբ առավել վտանգավոր են և հանգեցրել կամ կարող են հանգեցնել այնպիսի հետևանքների, որոնք ծանրացնում են արարքի բնույթը:

Այսպես, օրինակ, դեպքերից մեկում տեղի է ունեցել շորթում, ինչի արդյունքում անձը փորձել է ինքնասպանություն գործել: Հատկապես 2024 թ.-ի ընթացքում արձանագրվել են համեմատաբար մեծ քանակի շորթման դեպքեր, ինչը վերջին տարիներին բավականին տարածված հանցագործություն է տարածաշրջանում՝ ելնելով ԼԳԲՏ+ անձանց խոցելիությունից: Տարբեր միջոցներով տեղեկություններ ձեռք բերելով անձի սեռական կողմնորոշման մասին, վստահ լինելով, որ նա պատրաստ է վճարել այն բանի համար, որ իր սեռական կողմնորոշման մասին տեղեկություն չտարածվի, հանցավորները գործում են առավել անկաշկանդ և անպատիժ: Ավելին, տուժողները չեն ցանկանում անգամ դիմել իրավապահ մարմիններին, քանի որ այն տվյալները, որոնց տիրապետում է հանցավորը, կհայտնվեն իրավապահ մարմինների ձեռքին, իսկ տուժողները չունեն իրավապահ համակարգի նկատմամբ բավարար վստահություն:

Սույն բաժնում են նաև ընտանեկան բռնության այն դեպքերը, երբ տուժողներին ընտանիքի անդամները փորձել են տարբեր մասնագետների միջոցով «բուժել» կամ «ուղղել»: Այս միջոցները հոգեբանական լուրջ վնաս կարող են հասցնել անձանց և թույլ չտալ, որպեսզի անձը ներդաշնակ լինի իր ինքնության հետ: Նմանատիպ ծառայություն մատուցող անձինք, իհարկե, առաջնահերթ պետք է պատասխանատվության ենթարկվեն այս պարագայում, քանի որ չարաշահում են իրենց մասնագիտական համբավը, իրականացնում վնասակար գործունեություն և գումար վաստակում դրա դիմաց: Հայաստանում տարածված են ոչ միայն հոգեբանների կամ հոգեբույժների կողմից այսպիսի ծառայությունները, այլ նաև՝ կրոնական կառույցների[24]:

Սեռական բռնության դեպքերում իրավական պաշտպանության միջոցների դիմելու տուժողների կամքի բացակայությունը ևս վկայում է իրավապահ համակարգի նկատմամբ անվստահության մասին: Հաճախ տուժողներն իրենք են կրկնազոհացվում, իսկ իրավախախտը մնում է անպատիժ: Տեղյակ լինելով տուժողների այս խոցելի կողմի մասին, իրավախախտները ավելի վստահ են գործում՝ իմանալով, որ միևնույն է անպատիժ կմնան: Անպատժելիության մթնոլորտը խթանում է բռնության շղթան՝ թողնելով անձանց առանց արդարության ու պաշտպանության:

Հետևաբար այս հարցերի լուծման ուղղությամբ պետությունը մի քանի համակարգային խնդրի հասցեավորման կարիք ունի.

- Նախ և առաջ պետք է ուսումնասիրվի հոգեբանների և հոգեբույժների կողմից տրամադրվող ծառայությունների շրջանակը և համապատասխան միջոցներ ձեռնարկվի դադարեցնելու համար անձանց լուրջ վնաս հասցնող և իրենց մասնագիտական կարողություններից չբխող գործունեության իրականացումը:
- Իրավապահ մարմինները պետք է լինեն էլ ավելի զգայուն տարբեր հանցագործությունների ենթարկված ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ, ում խոցելիությունը օգտագործվում է իրավախախտների կողմից:

24 Փինք իրավապաշտպան ՀԿ, «Կոնվերսիոն պրակտիկաների և թերապիաների մասին ուսումնասիրություն», 2019 թ. https://pinkarmenia.org/wp-content/uploads/2024/02/conversion-therapy.pdf

ՄԱՍՆԱՎՈՐ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:

2. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 31[25]

Անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը սահմանում է յուրաքանչյուր անձի՝ օրենքի առջև իրավասուբյեկտության ճանաչման, ինչպես նաև գաղտնիության իրավունքը[26]: Այն ներառում է պետության պարտականությունը ճանաչելու անձի կողմից ընդունված իր սեռը և գենդերային ինքնությունը[27]՝ որպես անձի կողմից անձնական կյանքի իրավունքի իրականացման ապահովում: «Անձնական կյանքը» լայն հասկացություն է, ներառում է անձի ֆիզիկական և հոգեբանական ամբողջությունը: Որոշ դեպքերում այն ընդգրկում է նաև անձի ֆիզիկական և սոցիալական ինքնության ասպեկտները: Այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են, օրինակ, անձի գենդերային նույնականացումը, անունը, սեռական կողմնորոշումը և սեռական կյանքը, տեղավորվում են մարդու անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի պաշտպանության համատեքստում[28]: Անձի մարմինը իր անձնական կյանքի առավել ինտիմ բաղադրիչն է համարվում[29]: Անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը նաև նախատեսում է անձի ինքնազարգացման, այլ անձանց հետ կապերի հաստատման և զարգացման հնարավորության ապահովման իրավունքը, անձնական հարաբերությունների արդյունավետ իրացման, տվյալ հանրույթում ապահով միջավայր ունենալու իրավունքը[30]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում դիրքորոշում է հայտնել, որ մասնավոր անհատների ոտնձգություններից անձի ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության կապակցությամբ իշխանություններն ունեն պոզիտիվ պարտականություն՝ որոշ դեպքերում ՄԻԵԿ-ի 2-րդ կամ 3-րդ հոդվածների, մյուս դեպքերում՝ 8-րդ հոդվածի (առանձին կամ 3-րդ հոդվածի համակցությամբ) ներքո՝ ստեղծել և ապահովել իրավական նորմերի պատշաճ շրջանակ, որը թույլ կտա պաշտպանել մասնավոր

25 ՀՀ սահմանադրություն, 2015 թ. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723
26 Հոդված 16, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ 1966 թ. միջազգային դաշնագիր
27 Հոդվածներ16 և 17, ՄԻԿ Ընդհանուր մեկնաբանություն 16
28 ՄԻԵԴ վճիռ թիվ 2346/02, §49. Փրեթին ընդդեմ Միացյալ Թագավորության
29 ՄԻԵԴ վճիռ թիվ 24209/94. Ի.Ֆ.-ն ընդդեմ Թուրքիայի
30 ՄԻԵԴ վճիռ թիվ 66746/01. Քոննորսն ընդդեմ Միացյալ Թագավորության

անձանց կողմից բռնի գործողություններից[31]:

Չնայած նրան, որ միջազգայնորեն հռչակված մարդու իրավունքները երաշխավորված են Սահմանադրությամբ, դրանց արդյունավետ գործողությունը ապահովվում է օրենսդրական ակտերով նախատեսված մեխանիզմներով: ՀՀ-ում անձին դիտավորությամբ ֆիզիկական վնաս պատճառելու դեպքում պատասխանատվության մեխանիզմները նախատեսվում են ՀՀ քրեական օրենսգրքով[32]: Վերջինս պատիժ է սահմանում տարբեր աստիճանի վտանգավորության և տարբեր տեսակի վնասներ պատճառող ֆիզիկական և հոգեկան ներգործության հանցանքների համար: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է տարանջատել վնասը, որը մասնավոր կյանքի իրավունքի խախտում է համարվում այնպիսի ներգործությունից, որը կարող է համարվել անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը և ընդհուպ մինչև խոշտանգում: Հաճախ նուրբ է սահմանը մասնավոր կյանքի իրավունքի խախտման և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի:

Այս ենթաբաժնում ընդգրկված են՝

- ընտանեկան բռնության դեպքերը,
- այլոց կողմից ֆիզիկական բռնության դեպքերը,
- կյանքին կամ առողջությանն ուղղված սպառնալիքները,
- շորթման դեպքերը,
- մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկատվության տարածման դեպքերը:

Շատ դեպքերում, իհարկե, արարքները կարող են զուգահեռաբար առկա լինել, երբ օրինակ՝ ընտանեկան բռնությունը հաջորդել է անձի սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության վերաբերյալ տեղեկատվության տարածմանը, ֆիզիկական բռնությունը զուգորդվել է սպառնալիքներով և այլն:

Ընտանեկան բռնություն սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով

Դեպք 9

Անչափահաս աղջիկը նույնականում է լեսբի: Նա իր սեռական կողմնորոշման պատճառով ընտանեկան բռնության է ենթարկվել հոր և մոր կողմից: Վերջինիս խոսքերով 13 տարեկանից ծնողները իմացել են իր սեռական կողմնորոշման մասին, ինչի պատճառով բռնության, սպառնալիքների և ծեծի է ենթարկվել: 2024 թ. իրենց տանը կրկին իր սեռական կողմնորոշման պատճառով հայրը վիճաբանություն է սկսել և ծեծի ենթարկել նրան՝ բազմաթիվ հարվածներ հասցնելով աղջկա մարմնի տարբեր հատվածներին, ինչի արդյունքում նա հեռացել է տանից: Հայրը և հորեղբայրը, տեղեկանալով, որ նա հեռացել է տնից և իր զուգընկերուհու հետ է, բջջային հեռախոսակապի միջոցով սպանության

31 ՄԻԵԴ վճիռներ. Օմանն ընդդեմ Միացյալ Թագավորության, §§ 128-130; Բեվական և Ս.-ն ընդդեմ Բուլղարիայի, § 65; Սանդրա Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի, § 45; Ա.-ն ընդդեմ Խորվաթիայի, § 60; Դորդեվիչն ընդդեմ Խորվաթիայի, §§ 141-143; Սոդերմանն ընդդեմ Շվեդիայի, Մեծ պալատ, § 80.
32 ՀՀ Քրեական օրենսգիրք. Հոդված 194, 195, ինչպես նաև առողջության դե ուղղված հանցագործություններ. https://www.arlis.am/documentview.aspx?docid=153080

սպառնալիքներ են հնչեցրել թե՛ իր, և թե՛ իր զուգընկերուհու հասցեին՝ ասելով, որ եթե տուն չվերադառնա՝ կսպանեն իրենց: Սակայն աղջիկը չի ցանկացել դիմել ոստիկանություն, մասնավորապես այն պատճառով, որ անչափահաս է՝ 15 տարեկան: Նա չի կարող փաստաբանին լիազորել և անձամբ իր իրավունքները պաշտպանել, ուստի վստահություն չունի ոստիկանական համակարգի նկատմամբ:

Դեպք 10

Կինը իր լեսբի լինելու պատճառով ծնողների կողմից ենթարկվել է հոգեբանական ճնշումների: Մոտ մեկ ամիս ծնողները խոչընդոտներ են ստեղծել նրա ազատ տեղաշարժման հետ կապված, շատ դեպքերում թույլ չեն տվել նրան տնից դուրս գալ, սպառնացել են, որ եթե իր սեռական կողմնորոշումը չփոխի, կտեղափոխեն գյուղ և այլևս Երևանում չի բնակվի: 2024 թ. հունվարին կնոջ ծնողները կրկին թույլ չեն տվել տնից դուրս գալ և պահել են փակի տակ, որից հետո նա կապվել է կազմակերպության սոցիալական աշխատողի հետ: Մասնագետն ահազանգել է ոստիկանություն, ինչի արդյունքում ոստիկանները մեկնել են դիմողի բնակարան և արձանագրություն կազմել, որտեղ նշվել է, որ ծնողները անձի ազատությունը այլևս չսահմանափակեն: Սակայն դեպքից հետո կինը հեռացել է տնից և չի ցանկացել ծնողների դեմ հաղորդում ներկայացնել, քանի որ վստահություն չունի ոստիկանական համակարգի նկատմամբ:

Դեպք 11

2024 թ. փետրվարին Երևանում, բնակարանում նույնասեռական կնոջ հայրը վիճաբանություն է սկսել նրա սեռական կողմնորոշման հարցի շուրջ, որի ժամանակ բռունցքով հարվածներ է հասցրել կնոջը՝ գլխի և դեմքի շրջանում: Դրա արդյունքում կինը ստացել է մարմնական վնասվածքներ՝ աչքի շրջանում կապտուկներ, արյունազեղումներ: Այնուհետև, նա կարողացել է հեռանալ տնից, սակայն չի ցանկացել դիմել իրավապահ մարմիններին, քանի որ վստահություն չունի իրավապահ համակարգի նկատմամբ:

Դեպք 12

2024 թ. փետրվարին կինը ծնողների կողմից ընտանեկան բռնության է ենթարկվել՝ իր մազերի գույնի, նույնասեռական սեռական կողմնորոշման և հագուստի պատճառով: Ավելի վաղ՝ 2023 թ. դեկտեմբերի վերջին, կրկին նույն հարցի վերաբերյալ վիճաբանություն է տեղի ունեցել ծնողների հետ, ծնողներն իր կամքին հակառակ տարել են իրենց գյուղ և 2 շաբաթ թույլ չեն տվել դուրս գալ գյուղի տնից: Միայն խոստացել են, որ Երևան կվերադառնան, երբ իր ընկերների հետ կապը կխզի և մազերի գույնը կփոխի: 2024 թ. փետրվարին կինը կրկին վիճաբանել է ծնողների հետ մազերի գույնի և լեսբի լինելու պատճառով, որի արդյունքում ծնողները ծեծի են ենթարկել նրան: Հարվածների արդյունքում կինը ստացել է մարմնական վնասվածքներ: Դեպքից հետո նա դիմել է ոստիկանություն և ծնողների նկատմամբ կիրառվել է անհետաձգելի միջոց՝ նախազգուշացում: Հաղորդում ներկայացնել չի ցանկացել:

Դեպք 13

Անչափահաս աղջիկը դիմել է կազմակերպությանը և հայտնել, որ 2024 թ. հունիսի սկզբին՝ գիշերը, իրենց տանը հայրը՝ տեղեկանալով նրա լեսբի լինելու մասին, վիճաբանել է իր հետ: Հայրը 2 ձեռքով բռնելով աղջկա պարանոցից, սպառնացել է սպանել նրան: Աղջիկը կարողացել է ազատվել հոր ձեռքերից և տնից փախչել: Նա հայտնել է, որ 13 տարեկանից պարբերաբար նվաստացվել է հոր կողմից. հայրը թքել է իր վրա, ծեծի է ենթարկել, ինչի պատճառով նա պարբերաբար ինքնավնասում է կատարել՝ կտրել իր ձեռքերի երակները: Հարազատները և ընտանիքի անդամները պարբերաբար կասկածներ են հայտնել անձի սեռական կողմնորոշման վերաբերյալ: «Դու ի՞նչ գործ ունես էդ լեսբիների հետ, կարողա՞ դու էլ ես էդպիսին». հարցրել է հորաքույրը: Մի անգամ հորաքույրը և հորեղբայրը, տեսնելով անձին այգիներից մեկում, որտեղ ենթադրաբար հավաքվում են այլ նույնասեռական կանայք, ծեծել են անձին: Սեռական կողմնորոշման բացահայտումից հետո մայրը ասել է. «Գնա՛ տնից, չեմ ուզում դեմքդ տեսնեմ»: Մայրը՝ անձից տեղեկանալով իր լեսբի լինելու մասին, ծեծել է նրան: Անընդհատ ճնշումների արդյունքում աղջիկը բազմիցս փախել է տնից: 2024 թ. դեպքով Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ոստիկանության անչափահասների բաժնի պետի կողմից որոշում է կայացվել ծնողներին նախազգուշացում հայտնելու մասին: Դեպքից 4 օր անց միայն ոստիկանությունը տուժողին երեխաների խնամքի կենտրոն է տեղավորել: 2024 թ. հունիսին քննչական բաժնում դիմողի հարցաքննությունից հետո, քննչական բաժնի միջանցքում աղջկա հայրը նրան անվանել է «մուսռ», իսկ նրա մայրը ոստիկանի ներկայությամբ հարձակվել է նրա վրա, հարվածներ է հասցրել և խլել բջջային հեռախոսը: Բացի այդ, դեպքից հետո աղջկա ծնողները վերջինիս չեն տրամադրել իր հոգեմետ դեղերը, ինչի պատճառով դիմողի առողջական վիճակը վատթարացել է: Մալաթիա-Սեբաստիա ոստիկանության անչափահասների բաժանմունքի կողմից որոշում է կայացվել ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ նախազգուշացում կիրառելու վերաբերյալ: Իսկ Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանների քննչական բաժնում ներկայացված հաղորդման վերաբերյալ մինչև օրս տուժողը որևէ որոշում չի ստացել:

Դեպք 14

2024 թ. սեպտեմբերին տրանս կինն ահազանգել է Լոռու մարզային ոստիկանություն և հայտնել, որ իր գենդերային ինքնության պատճառով ծնողների կողմից ենթարկվել է ֆիզիկական բռնության: Նրա ծնողները իմացել են որ նա տրանս կին է: Հայրը հորդորել է, որ փոխի իր պահվածքը, այլևս ԼԳԲՏ+ համայնքից ընկերների հետ չշփվի: Սակայն տրանս կնոջ կողմից բացասական պատասխան ստանալով՝ հայրը սկսել է ձեռքերով հարվածներ հասցնել նրա մարմնի տարբեր հատվածներին: Տրանս կինը կարողացել է ազատվել հոր հարվածներից և փակվել է իր սենյակում: Նա ահազանգել է ոստիկանություն: Ոստիկանությունը ժամանել է նրա բնակության վայր, այնուհետև ոստիկանությունը որոշում է կայացրել ծնողների նկատմամբ նախազգուշացում կիրառելու մասին:

Դեպք 15

2023 թ. նոյեմբեր ամսին նույնասեռական կնոջ մորաքրոջ աղջկա նախաձեռնությամբ նրա ծնողները խլել են վերջինիս հեռախոսը և կարդալով նամակները որոշել են ուղարկել նրան ՌԴ, որպեսզի «ուղղվի»: Մինչև ՌԴ ուղարկելը կինը ենթարկվել է ընտանեկան բռնության՝ մայրը ծեծել է նրան, նաև բազմիցս ծաղրել են մազերի ու հագուկապի պատճառով: Այդ ընթացքում մայրը բազմիցս շեշտել է. «դա շեղում է, ուղղակի ինչ-որ մեկից կախվածության մեջ ես, դրանից է», նաև ասել է. «դու էս տանը ապրելու իրավունք չունես, մենք չենք հանդուրժի քեզ, եթե չփոխվես»: Քանի որ ՌԴ-ում էլ կնոջ վարքը, մասնավորապես, լեսբի լինելը չի փոխվել, նրան ուղարկել են հետ՝ Հայաստան: Դրանից հետո կնոջը տանը պարբերաբար ծեծել են, վաճառել են նրա դիջեյի վահանակը և գումարը չեն տվել նրան: Մայրը ասել է. «ես մի երեխա ունեմ, այսուհետ, դու չկաս», նաև շեշտել է. «բոլոր լեսբիներին պետք է վերացնել»: Կինը չի դիմել իրավապահ մարմիններին, 2024 թ. հունվարին դիմել է միայն կազմակերպության սոցիալական աշխատողին:

Դեպք 16

Բիսեքսուալ կինը դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին 2024 թ. հունվարին: Նա պարբերաբար ենթարկվել է բռնության մոր կողմից: Մայրը սպառնացել է. «եթե փորձես տնից գնալ, վիզդ կկտրեմ մինչև խռխռաս, իսկ մյուս շեղված ընկերներիդ էլ կսատկացնեմ»: Մայրը նրան ասել է, որ բոլոր ընկերներին տեղյակ է պահել, որ եթե նրան տեսնեն ինչ-որ մեկի հետ, զանգեն իրեն: Քույրն ու մայրը պարբերաբար ծաղրել են, երբ կինը խոսել է նրանց հետ կամ չեն պատասխանել նրան: Կինը չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 17

Կնոջ ծնողները, իմանալով նրա լեսբի լինելու մասին, ֆիզիկական բռնության են ենթարկել նրան, այնուհետև կտրտել են և վառել նրա իրերը: Մայրը նաև վերցրել և թաքցրել է կնոջ անձնագիրը: Նրանք նաև նախկինում երկար ժամանակ փակի տակ են պահել կնոջը: Նա կազմակերպությանը դիմել է 2024 թ. հունվարին և դիմելիս գտնվում էր սթրեսային վիճակում, ուներ վախեր, որ նորից փակի տակ կպահեն կամ կծեծեն իրեն: Կինը չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 18

Կնոջը մի երիտասարդ տղա սպառնացել է, որ տեղյակ է իր լեսբի լինելու մասին, և եթե կինը չամուսնանա իր հետ, տեղյակ կպահի ընտանիքին: Կինը մերժել է նրան, և այդ տղան կնոջ և իր զուգընկերուհու նկարները ուղարկել է վերջինիս մայրիկին: Երբ կինը տուն է վերադարձել, մայրը ոտքով խփել է նրա ոտքերին՝ իմանալով, որ վերջինս ունի ծնկի հետ կապված լուրջ խնդիրներ, նաև քաշել է մազերից: Նույն կինը 2 տարի շարունակ նաև բռնության է ենթարկվել իր զուգընկերուհու կողմից: Ամեն անգամ երբ ասել է, որ ցանկանում է բաժանվել, կրկին ֆիզիկական բռնության է ենթարկվել: Կինը նույն զուգընկերուհու կողմից ենթարկվել է նաև սեռական բռնության: Նա 2024 թ. հունվարին դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին, սակայն չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 19

Կնոջը ընտանիքի անդամները փորձել են փակի տակ պահել: Քույրը իմացել է նրա լեսբի լինելու մասին և «բուժելու նպատակով» առաջարկել է տանել հոգեբանի ու հոգեբույժի: Ընտանիքի անդամները նրան մեկ ամիս փակի տակ են պահել, այնուհետև ցանկացել են տեղափոխել մարզային քաղաքներից մեկը: Երբ կինը զանգահարել է ոստիկանություն, ընտանիքի անդամները ոստիկաններին կեղծ տեղեկատվություն են տվել, նաև մեղադրել են սեռական կողմնորոշման համար, քաշքշել և խփել են: Ոստիկաններից մեկն էլ ասել է՝ «Շատ սիրուն աղջիկ ես, ոնց ես դարձել տենց»: Կնոջ դիմումին ընթացք չի տրվել:

Դեպք 20

Բիսեքսուալ տղամարդու քույրը և ծնողները միասին վերցրել են նրա հեռախոսը և կարդացել նամակագրությունը իր նախկին զուգընկերոջ հետ, որը ներառել է նաև կիսամերկ լուսանկարներ: Հայրը հարվածել է տղամարդու դեմքին և վիրավորական խոսքեր հնչեցրել: Վիրավորական արտահայտություններ արել են նաև քույրը և մայրը: Ընտանիքի անդամները ստիպում են, որ նա ամուսնանա կնոջ հետ, պարբերաբար վիրավորում են, պահանջում, որ շփվի կանանց հետ և ծանոթացնի նրանց իրենց հետ: Տղամարդը դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին, սակայն չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 21

Կնոջ հայրը տարիներ շարունակ բռնության է ենթարկել մորը՝ երբեմն նաև երեխաներին: 2023 թ. նոյեմբեր ամսից սկսած կասկածներ են սկսել կնոջ նույնասեռական սեռական կողմնորոշման վերաբերյալ, և հայրը ու մայրը սկսել են ճնշել նրան: Հորաքույրը, ով դրական վերաբերմունք ունի ԼԳԲՏ+ անձանց հանդեպ, 2024 թ. փետրվարին հայտնել է կնոջ ծնողներին, որ նա լեսբի է: Ինչի արդյունքում հայրը կնոջը ենթարկել է ֆիզիկական բռնության, խփել է գլխին, ոտքերին: Կինը նախկինում փորձել է փախչել տնից, սակայն նրան հետ են բերել՝ խոստանալով, որ ամեն ինչ լավ կլինի, և նորից ծեծել են: Վերջին անգամ ասել են. «եթե չես փոխվելու, լավ է գնաս»: 2024 թ. փետրվարին նա դիմել է միայն կազմակերպության սոցիալական աշխատողին, չի դիմել ոստիկանություն:

Դեպք 22

Նույնասեռական կնոջը մայրը և քույրը համոզել են վերադառնալ տուն, չնայած նախկինում եղած վեճերին ու բռնությանը՝ պատճառաբանելով, որ Ամանոր է և ուզում են հաշտվել: Հունվար ամսին նա ընդհանրապես տնից դուրս չի եկել, բայց մայրը իրավիճակը շարունակաբար լարված է պահել: Մայրն ու քույրը այդ ընթացքում նրա սնունդը առանձին են դրել, շորերը առանձին են լվացել, և երբ կինը հարցրել է, թե ինչու են այդպես անում, մայրը ասել է, որ՝ «այդպես է պետք, քո իրերը մեր իրերին չպետք է կպնեն»: Ավելին, կինը նաև ֆիզիկական բռնության է ենթարկվել: Մեկ անգամ մայրը իր է շպրտել նրա վրա, որը կպել է նրա դեմքին: Իսկ երբ մորաքույրը եկել է իրենց տուն, մայրը բռնել է նրա թևերից, իսկ մորաքույրը ծեծել է նրան: Դրանից հետո կինը տնից հեռացել է: 2024 թ. փետրվարին

դիմել է միայն կազմակերպության սոցիալական աշխատողին, չի դիմել ոստիկանություն:

Դեպք 23

Կինը, ով նույնականանում է լեսբի, դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին 2024 թ. փետրվարին: Նա տարիներ շարունակ բռնության է ենթարկվել խնամակալների կողմից՝ իր սեռական կողմնորոշման պատճառով: Անձին պարբերաբար ծեծել են, հաճախ փախել է տնից, գիշերել այգում, սակայն ֆինանսական ռեսուրսների բացակայության պատճառով երկար ժամանակ քաղցած մնալուց հետո վերադարձել է տուն, իսկ ֆիզիկական բռնությունը շարունակվել է: Նա չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 24

Քամինգ աութից հետո մայրը բռնության է ենթարկել աղջկան՝ լեսբի լինելու համար, իսկ հայրը դանակով հարձակվել է նրա վրա, ծնողները պարբերաբար ծեծել են նրան: Երբ աղջիկը փախել է տնից, համոզել են, որ հետ գա, իսկ երբ վերադարձել է, նորից ծեծել են, և նա հեռացել է տնից ու երեք օր գիշերել է դրսում: Այնուհետև գումար ու սնունդ չունենալու պատճառով վերադարձել է տուն ու նորից բռնության ենթարկվել: Մայրը այրել է նրա իրերը: Կինը 2024 թ. փետրվարին դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին, սակայն չի դիմել ոստիկանություն:

Դեպք 25

Նույնասեռական տղամարդը վերադարձել է տուն, և մայրը, նկատելով նրա պիրսինգը, կրկին սկսել է խոսակցություն նրա սեռական կողմնորոշման վերաբերյալ, սպառնացել է նրան, որ հենց հայրը տուն գա, կպատմի հորը, և հայրը կսպանի նրան: Տղամարդը 2024 թ. փետրվարին դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին, սակայն չի դիմել ոստիկանություն:

Դեպք 26

2024 թ. փետրվարին կինը դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին: Նրա հայրը և եղբայրը, իմանալով նրա լեսբի լինելու մասին, շարունակաբար սեռական բնույթի հայհոյանքներ են հնչեցրել և վիրավորել: Քանի որ կինը բնակության համար այլ վայր չուներ, ստիպված ապրել է ծնողների հետ՝ խուսափելով տան տարածքում հանդիպել նրանց: Սակայն հայրը շարունակաբար հայհոյանքներ է հնչեցրել, այնպես որ նա լսի դրանք: Կինը չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 27

Երբ կնոջ նույնասեռական սեռական կողմնորոշումը հայտնի է դարձել ընտանիքի անդամներին, նա պարբերաբար վիճել է մոր հետ, և մայրը անձին քաշքշել է: Անձի 18 տարին լրանալու օրը մայրը զանգել է և տեղեկացրել, որ նա գնա իրերը

վերցնի, քանի որ այլևս չի ապրելու իր տանը: Արդյունքում, նա հայտնվել է դրսում: 2024 թ. փետրվարին դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին, սակայն չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 28

Կինը, ով նույնականանում է լեսբի, լքել է տունը, քանի որ ինչ-որ մեկը գումարի դիմաց ծնողներին պատմել է, որ նա «այլ սեռական կողմնորոշում ունի»: Դրանից հետո մայրը և հայրը ենթարկել են նրան ֆիզիկական և հոգեբանական բռնության: Կինը նշում է, որ բռնությունը միշտ եղել է , բայց այդ տեղեկատվությունից հետո ամեն ինչ ավելի սրվել է: Մայրը խփել է նրա գլխին, քաշել է մազերից, հայրն ապտակներ է հասցրել: Նա նշել է, որ ֆիզիկական բռնության արդյունքում աչքի տակ ունեցել է կապտուկ: Այդ ամենից հետո կինը հեռացել է տնից՝ հույս ունենալով խուսափել բռնությունից: Նա դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին 2024 թ. մարտին, սակայն չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 29

Կնոջ եղբայրը, տեղյակ չլինելով նրա նույնասեռական սեռական կողմնորոշման մասին, փորձել է հաշտեցնել մորն ու քրոջը և կանչել է հետ տուն՝ ասելով, որ մայրը ուզում է տեսնել իրեն: Արդյունքում կինը վերադարձել է տուն, և երբ եղբայրը դուրս է եկել, մայրը քաշքշելով տարել է նրան սենյակ, վիրավորել և ասել, որ կփակի սենյակում մինչև վերջինս ուղղվի: Իսկ եթե չի ուղղվի, չի ուզում տեսնել իր տանը: Կինը դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին 2024 թ. մարտին, սակայն չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 30

Տրանս կինը շարունակաբար ենթարկվել է ֆիզիկական և հոգեբանական բռնության, երբ ընտանիքի անդամները տեղեկացել են նրա գենդերային ինքնության մասին, որը բացահայտվել է զինկոմիսարիատի աշխատակիցների կողմից: Դրանից հետո հայրը պարբերաբար հայհոյել է և տարբեր մարդկանց առաջարկել սեռական հարաբերություններ ունենալ իր զավակի հետ՝ իբր նպատակ ունենալով այնպես անել, որպեսզի նա ամաչի իր գենդերային ինքնության պատճառով: 2024 թ. ապրիլին տրանս կինը դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին, սակայն չի դիմել ոստիկանություն:

Դեպք 31

Տրանս աղջկա գենդերային ինքնությունը բացահայտել են դպրոցում և սկսել են ծաղրել ու հոգեբանական ճնշում գործադրել: Դպրոցի աշխատակիցները տեղեկացրել են նրա մորը վերջինիս գենդերային ինքնության մասին: Տուն վերադառնալուց հետո տրանս աղջկան ենթարկել են հոգեբանական բռնության, գորգռացել են նրա վրա և ասել, որ «եթե Էդպիսին է. լավ կլինի իրենց հետ չապրի»: Նա, վախենալով, որ կարող են ֆիզիկական բռնության ենթարկել իրեն, հեռացել է տնից, այնուհետև՝ ընտանիքի անդամները փորձել են գտնել նրան: Տրանս աղջիկը չի ցանկացել դիմել ոստիկանություն և վերադարձել է տուն,

որտեղ, մի քանի օր անց հոգեբանական ճնշում կիրառելով կտրել են նրա մազերը: Նա չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 32

Նույնասեռական կինը դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին 2024 թ. ապրիլին: Հունվար ամսից սկսած նրա հայրը ծխելու, դաջվածքների, սանրվածքի համար վերջինիս հասցեին սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել, թևից բռնել, ձիգ սեղմել այնքան, որ կապտել է նրա ձեռքը, և դուրս է արել տնից: Դաջվածքները տեսնելուց հետո գարեջրի շիշը շպրտել է նրա վրա և կասկած հայտնել նրա սեռական կողմնորոշման մասին: Կինը չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 33

Կնոջ հայրը ալկոհոլի ազդեցության տակ պարբերաբար ծեծել է նրան, լեսբի լինելը բացահայտելուց հետո ֆիզիկական բռնությունը շարունակվել է: Հայրը նաև փորձել է ղեկավարել նրա կյանքը, հնչեցրել է հայհոյանքներ: Կռիվների ժամանակ այլ անձանց ներկայությամբ պարբերաբար վիրավորել է զավակին ու ծեծել: Արդյունքում կինը այլևս չդիմանալով՝ հեռացել է տնից: Նա դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին 2024 թ. ապրիլին, սակայն չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 34

Քվիր անձն իր տեսքի և գենդերային արտահայտման պատճառով հաճախ կոնֆլիկտներ է ունեցել քեռու հետ, ով պարբերաբար ծեծել է նրան: Այս ամենին զուգահեռ նաև քննարկվել է նրա ուշ տուն գնալու հարցը, որի վիճաբանության իրավիճակին ներկա են եղել նաև մայրը և տատիկը, բայց չեն կարողացել շատ օգնել իրեն, միայն փորձել են բաժանել, որ քեռին չխփի: Քեռին փորձել է նաև խեղդել նրան: Անձը 2024 թ. հունիսին դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին, սակայն չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 35

Երբ տղամարդը բացահայտել է իր գեյ լինելը, պարբերաբար վիճաբանել է ընտանիքի անդամների հետ, ովքեր նրան վիրավորել են իր սեռական կողմնորոշման համար: Մորաքույրը գոռացել է ու ասել է, որ նա հեռանա տնից, քանի որ նա «մանկապիղծ» է և չի ուզում իր երեխային, ով 10 տարեկան է, տղամարդը սեռական բռնության ենթարկի, քանի որ գեյ անձինք, ըստ մորաքրոջ, «մանկապիղծ» են: Տղամարդը 2024 թ. հունիսին դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին, սակայն չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 36

Նույնասեռական կնոջ մայրը պարբերաբար նրա ներկայությամբ խոսել և վիրավորել է ԼԳԲՏ+ համայնքի ներկայացուցիչներին: Հաճախ փորձել է ճշտել՝ արդյոք

նա նույնպես պատկանու՞մ է այդ համայնքին, և սպառնացել, որ եթե իմանա, որ նույնպես լեսբի է, կսպանի: Կինը 2024 թ. հունիսին դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին, սակայն չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 37

Կինը 2024 թ. հուլիսին դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին: Նա պարբերաբար բռնության և հոգեբանական ճնշումների է ենթարկվել մոր կողմից՝ իր նույնասեռական սեռական կողմնորոշման հիմքով: Դիմելու նախորդ օրը մայրը առավոտյան վաղ հանել է նրան տնից: Մայրը թույլ չի տալիս նրան շփվել ընկերուհու հետ, քանի որ ասում է. «նա փչացած է ու լեսբի»: Մայրը նաև պարբերաբար սպառնացել է և ծեծել է նրան՝ այն պատրվակով, թե իր ծանոթները աղջկան տեսել են այլ լեսբիների հետ: Մայրը հստակ սպառնացել է, որ եթե նման բան իմանա, կասի իր ազդեցիկ ծանոթին, որ սպանի դստերը: Հերթական խոսակցության ժամանակ, երբ կինն անընդհատ վեճերից հոգնած և հոգեբանորեն ճնշված վիճակում նստել է մի անկյունում և վախից, որ նորից չվիճեն, ընդհանրապես ձայն չի հանել, մայրը և քույրը մեղադրել են վերջինիս թմրանյութեր օգտագործելու մեջ: Կինը չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 38

ՌԴ-ում ԼԳԲՏ+ անձանց մարդու իրավունքները սահմանափակող օրենքների ընդունումից հետո նույնասեռական տղամարդը իր զուգընկերոջ հետ տեղափոխվել է ՀՀ: Զուգընկերը պարբերաբար ճնշել է նրան, սպառնացել է: Իբրև պատիժ, նրա ներկայությամբ սեռական հարաբերություն է ունեցել այլ մարդկանց հետ և ասել, որ եթե նորից իրեն չլսի, ամեն անգամ այս կերպ կպատժի իրեն: Վերջին անգամ զրույցի ժամանակ նախկին զուգընկերը սպառնացել է, որ կդանակահարի նրան: Տղամարդը հեռացել է տնից, հայտնվել է դրսում: Խուսափել է դիմել ոստիկանություն, քանի որ ՌԴ-ում իր զուգընկերն քրեական գործով ներգրավված է:

Դեպք 39

Նույնասեռական կնոջ զուգընկերուհին խլել է նրանից հեռախոսը և կարդացել նամակները՝ որակելով վերջինիս դավաճան, այնուհետև ամուր բռնել է նրա ձեռքերը և բաց չի թողել: Այդ ընթացքում կինը ցավ է զգացել և ձեռքերը կապտել են: Նա չի կարողացել շարժվել, զուգընկերուհին սպառնացել է, որ նրա հեռախոսը կվերցնի ու կհեռանա: Կինը վախեցել է և լաց է եղել: Որոշ ժամանակ անց նկատելով նրա լացը՝ զուգընկերուհին բաց է թողել նրա ձեռքերը, սակայն երկար ժամանակ բռնածի հետքերը չեն անցել: Կինը չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 40

Նույնասեռական սեռական կողմնորոշումը բացահայտելուց հետո՝ տղայի ընտանիքի անդամները նրան ենթարկել են ֆիզիկական բռնության և հնչեցրել են վիրավորանքներ. նշված պահին երիտասարդը դեռևս եղել է անչափահաս: Նա ստիպված փախել է տնից, սակայն ծնողները դիմել են ոստիկանություն, որ-

պեսզի գտնեն նրան: Նա տեսնելով ոստիկանության էջում, որ իրեն են փնտրում՝ ներկայացել է ոստիկանություն, որտեղ գործով զբաղվող ոստիկանը գոռացել է իր վրա: Բաժնում ասել են. «Ծնողներդ մեղք են, դու տղա չե՛ս», «դու լավ տղա չես, համարդ պետքա անպայման տաս մեզ»: Ոստիկանության բաժին եկել են նաև նրա ծնողները, ինչն ավելի է լարել իրավիճակը, և նրան հոգեբանական ցավ պատճառել: Արդյունքում ծնողները որոշել են հրաժարվել որդու խնամակալությունից:

Դեպք 41

Գեյ տղամարդը որոշել է մորը ասել իր նույնասեռական սեռական կողմնորոշման մասին: Մայրը տեղեկանալուց հետո հարցականի տակ է դրել անձի ասածը և մի քանի օր անց առաջարկել է կոնվերսիոն թերապիայի գնալ՝ սեռական կողմնորոշումը փոխելու նպատակով: Նա նշել է, որ կարդացել է դրա արդյունավետության մասին, և որ դա կարող է օգնել տղամարդուն բուժվել: Նա չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 42

Նույնասեռական տղամարդու հայրը վերցրել է նրա հեռախոսը և տեսել իր նկարներն ու նամակագրությունը: Երբ տղամարդը քնած է եղել, խփել է նրան, սեղմել ու քաշքշել: Մայրը և հայրը միասին ժամանակ են տվել նրան՝ ասելով, որ պետք է փոխվի: Տղամարդը չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 43

Մոր և եղբոր կողմից անընդհատ ճնշումների արդյունքում կինը մեծ քանակի դեղեր է խմել և արդյունքում թունավորմամբ նրան տարել են հիվանդանոց: Մայրը հիվանդանոցում ասել է նրան, որ եթե չդադարի լեսբի լինել, ավելի վատ կլինի: Եղբայրը, իմանալով քրոջ սեռական կողմնորոշման մասին, գնացել է վերջինիս աշխատավայր և նրա ներկայությամբ կտրել է երակները՝ նշելով, որ իր քույրը չի կարող լեսբի լինել: Կինը չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 44

Անչափահաս տղայի հայրը, տեսնելով վերջինիս գրապահարանում գեղարվեստական գիրք, որը նույնասեռ հարաբերությունների մասին է, ծեծում է նրան: Տղայի ընտանիքի անդամներից մեկը կարծում էր, որ գեյ լինելը հորմոնալ խանգարում է: Հետևաբար, ծնողները նրան տարել են դպրոցի հոգեբանի մոտ, որը տղայի հետ իրենց քննարկածները պատմել է ծնողներին և ասել է նրան, որ բոլոր նույնասեռական անձանց պետք է վառել: Հայրը նաև վերցնում է տղայի աշխատավարձը, որպեսզի վերջինս նույնասեռ անձանց մասին գրքեր չպատվիրի: Տղան չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 45

Տրանս կինն անչափահաս է, ով իր սեռական կողմնորոշման և գենդերային

ինքնության մասին պատմել է հոգեբանին: Մասնագետն ամեն ինչ պատմել է նրա հորը: Արդյունքում հայրը ծեծել է նրան, այնուհետև տարել է հոգեկան առողջության կետրոն: Ընտանիքում տրանս կնոջ նկատմամբ ֆիզիկական բռնությունը պարբերաբար կրկնվում է, նրան նաև թույլ չեն տալիս իր նախընտրած հագուստը կրել: Ծնողները պնդում են, որ տարիքի հետ կանցնի: Նա դպրոցում ևս իր գենդերային ինքնության պատճառով բուլլինգի է ենթարկվում: Տրանս կինը չի դիմել իրավապահ մարմիններին:

Չնայած նրան, որ ընտանեկան բռնությունը Հայաստանում տարածված է ոչ միայն ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ, այլ նաև հետերոսեքսուալ կանանց և երեխաների, պետությունը շատ դանդաղ և ոչ համապարփակ քայլերով է մոտենում խնդրի լուծմանը կամ առնվազն իրավիճակի փոփոխությանը: Ընտանեկան բռնության դեմ օրենքի ընդունումը, իհարկե, մեծ քայլ էր այս ուղղությամբ: Հարկ է նշել նաև այն դրական տեղաշարժը, որը 2024 թ.-ին իրականացվեց ընտանեկան բռնության դեմ օրենքում, մասնավորապես, սահմանելով «զուգընկեր» հասկացությունը: Արդյունքում, այժմ օրենքը պաշտպանում է նաև ԼԳԲՏ+ անձանց, որոնք ընտանեկան բռնության են ենթարկվել զուգընկերոջ կողմից: Միևնույն ժամանակ, քրեական օրենսգրքում այս առումով դեռևս բացեր կան: Մասնավորապես, Քրեական օրենսգրքում արարքի ծանրացնող հանգամանք է նախատեսված այն մերձավոր ազգականի կողմից կատարված լինելը, որտեղ, սակայն զուգընկերը չի ներառվում: Այսինքն, զուգընկերոջ կողմից կատարված բռնության պարագայում անձը կարող է օգտվել ընտանեկան բռնության դեմ օրենքով նախատեսված միջոցներից, սակայն արարքի որակման հարցում հանցավորի ինքնությունը հաշվի չի առնվի որպես ծանրացնող հանգամանք և այն կդիտարկվի որպես հասարակ հանցանք: Այլ խնդիր է, իհարկե, կրկին վստահությունը իրավապահ համակարգի նկատմամբ: Մինչ այժմ արձանագրված դեպքերից որևէ մեկի պարագայում տուժողը չի ցանկացել դիմել իրավապահ մարմիններին և տեղեկություն հայտնել իր անձնական կյանքի մասին: Միևնույն ժամանակ, ծնողների կողմից բռնության երեք դեպքերում, երբ տուժողը դիմել է ոստիկանություն, կիրառվել է նախազգուշացում: Թե որքանով է դա արդյունավետ միջոց, և որքանով է նվազեցնում հետագա բռնությունների ռիսկը, այս պահին դժվար է գնահատել: Իրավապահ մարմիններին դիմած անձինք նաև պետք է հնարավորություն ունենան ստանալու մասնագիտական աջակցություն և անհրաժեշտության դեպքում նաև՝ ժամանակավոր կացարանի հնարավորությունը: Պետության կողմից պետք է այս գործառույթի արդյունավետ իրականացման համար հատկացվեն հատուկ միջոցներ, սակայն դրանց սղության պարագայում էլ ավելի կարևոր է դառնում հասարակական կազմա-կերպությունների հետ համագործակցությունն ու ուղղորդումը:

Ընտանեկան բռնությունը հասցեավորելու համար, իհարկե, օրենսդրական փոփոխությունները անհրաժեշտ են, սակայն՝ ոչ բավարար: Բռնության անթույլատրելիության վերաբերյալ պետությունը պետք է իրականացնի իրազեկման արշավներ ամբողջ հասարակության շրջանում: Բացի այդ, պետությունը պետք է ընտանեկան բռնությունից տուժած չափահաս անձանց առաջարկի աջակցություն ընտանեկան բռնությունից ազատվելու և ինքնուրույն կայունանալու համար՝ նախքան ընտանեկան բռնության վերաբերյալ բողոք ներկայացնելը: Իսկ անչափահաս անձանց աջակցության կարիքը պետք է գնահատվի թե՛ դպրոցում, թե՛ հասարական կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով՝

թույլ չտալու, որպեսզի ընտանեկան բռնության ենթարկված անչափահաս անձինք մնան առանց իրավական պաշտպանության և մասնագիտական աջակցության: Այսպիսով, պետությունը ցույց կտա իր աջակցությունն ու կամքը՝ լինել տուժողի համար պաշտպանության միջոց:

Արձանագրված դեպքերից մեկում նաև նկարագրված է ոստիկանների կողմից վատ վերաբերմունքը, ինչը հաճախ է պատահում, երբ տուժողը առանց իրավաբանի ներկայության փորձում է դիմել ոստիկանություն: Այս ընդամենը մի վկայություն է այն իրավիճակի, ինչը հանգեցրել է իրավապահ համակարգի նկատմամբ անվստահության և այսպիսի ծայրահեղ անպատժելիության մթնոլորտի:

Ֆիզիկական բռնություն

Դեպք 46

ԱՄՆ քաղաքացի նույնասեռական տղամարդը, որը գտնվում է Երևանում, 2024 թ. փետրվարին կեսգիշերին նույնասեռական անձանց ծանոթությունների «Գրինդր» հավելվածի միջոցով ծանոթանում է մի տղայի հետ: Այդ միջոցով անծանոթ տղայի հետ պայմանավորվում են հանդիպել կենտրոնում, սակայն այնուհետև, տղամարդը առաջարկում է իր բնակարանում հանդիպել: Պայմանավորվելուց 30 րոպե անց «Գրինդր» հավելվածով նա ուղարկում է թվային կողմնորոշիչ տվյալներ անծանոթին, որը հայտնում է, որ կարող է գալ ընկերոջ հետ: Այդ հաղորդակցությունից 30-40 րոպե անց անծանոթ տղամարդիկ հասնում են իր բնակության վայր, որտեղ կապ են հաստատում իր հետ և հայտնում, որ տեղում են: Բացի դրանից հարցնում են, թե ինչպես կարող են բարձրանալ տղամարդու տուն, որին ի պատասխան տղամարդը ասում է, որ անձամբ կդիմավորի նրանց և իջնում է բակ: Հանդիպելուց և բարևելուց հետո տղամարդը հայերեն լեզվով ասում է՝ «արի գնացինք», և շրջվում դեպի շքամուտք, որպեսզի նրանց ուղեկցի իր տուն: Սակայն այդ պահին ձախ ձեռքի շրջանում ուժեղ ցավ է զգում: Շրջվելով տղաների ուղղությամբ՝ տեսնում է, որ նրանցից մեկի ձեռքում դանակ է, և հասկանում է, որ իրեն դանակով հարվածել են: Անծանոթ տղամարդիկ դանակով հարվածելուց հետո բարձր ձայնով բղավում են, իր գեյ լինելու հանգամանքը նշելով հայհոյանքներ հասցնում, որից հետո իրենց մեքենան թողնելով բակում՝ նրանք փախնում են: Այդ տղաները տղամարդուն հասցրել են 4 հարված, ինչի արդյունքում նա վիրահատության է ենթարկվել: Տղամարդը նույն օրը հաղորդում է ներկայացրել ոստիկանությունում, հարուցվել է քրեական գործ՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու հանցակազմի հատկանիշներով (քրեական օրենսգիրք, հոդված 167, մաս 2-րդ, կետ 7, 8, 15): Գործի քննությունը գտնվում է դատաքննության փուլում:

Այս դեպքի առանձնահատկությունը նրանում է, որ տուժողը հանդիսանում է Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացի: Հաջորդ առանձնահատկությունը նրանում է, որ սա միակ դեպքն է, երբ արարքը որակելիս որպես ծանրացնող հանգամանք հաշվի է առնվել հանցավորների ատելության շարժառիթը, այն է՝ հանցավորները դանակահարել են տուժողին վերջինիս սեռական կողմնորոշումը

հիմք ընդունելով: Այս առանձնահատկությունները, թերևս, կապված են միմյանց հետ: Փաստացի, Հայաստանի Հանրապետության որևէ քաղաքացի նախկինում պատշաճ իրավական պաշտպանություն չի ստացել: Հետևաբար, ակնհայտ է, որ դեպքի ճիշտ որակումը կապված է տուժողի քաղաքացիության հետ: Այս դեպքը նաև վկայում է, որ դեպքերի որակումը իրավակիրառ մարմիններում իրականացվում է կամայական կերպով և ցանկության դեպքում առկա է մասնագիտական կարողություն՝ քննելու ատելության հիմքով հանցագործություններ՝ համապատասխան որակումներ տալով:

Հոգեկան ներգործություն. անձնական կյանքին վերաբերող տեղեկատվության տարածում կամ սպառնալիք

Դեպք 47

Սեքս աշխատանքով զբաղվող տրանս կինը 2024 թ. փետրվարին երկու տղաների հետ հեռախոսակապի միջոցով պայմանավորվել է սեռական ծառայություն մատուցելու վերաբերյալ: Այդ տղաների պահանջով տրանս կինը հանդիպել է տղաներին, ծանոթացել նրանց հետ: Նա շփման ժամանակ ներկայացրել է՝ ինչ ծառայություններ է մատուցում: Այդ տղաները սկսել են կնոջը ծաղրի ենթարկել: Նա, զգալով, որ այդ տղաները իրեն ծաղրում են իր՝ տրանս լինելու պատճառով, փորձել է հեռանալ տարածքից: Սակայն այդ տղաները թույլ չեն տվել, որ տրանս կինը հեռանա, սահմանափակել են իր ազատ տեղաշարժը, այնուհետև՝ նրա շորերից բռնել են և սկսել քաշքշել: Միայն ոստիկանություն զանգահարելուց և ոստիկանների կողմից հյուրանոց ժամանելուց հետո տրանս կինը կարողացել է դուրս գալ հյուրանոցից: Նրա խոսքերով պարեկային ծառայողները ժամանել են հյուրանոց, սակայն իրավախախտներին բերման ենթարկելու փոխարեն սկսել են ծաղրել իրեն իր գենդերային ինքնության առնչությամբ: Տրանս կինը դեպքից անմիջապես հետո զանգահարել է ոստիկանություն: Մինչ օրս գործի ընթացքի մասին տեղեկություն բացակայում է:

Դեպք 48

2024 թ. հունիսին նույնասեռական տղամարդը հաղորդում է ներկայացրել Շիրակի մարզային ոստիկանություն այն մասին, որ առանց իրեն տեղյակ պահելու, իր ծանոթ ոմն «Անյութան», վերցնելով իր համակարգիչը և մուտք գործելով իր անձնական կյանքին վերաբերվող լուսանկարների և տեսաձայնագրությունների բաժին, իր և զուգընկերոջ ինտիմ, մերկ լուսանկարները տեղադրել է «Տիկտոկ», «Ինստրագրամ» և «Ֆեյսբուք» հարթակներում, որի արդյունքում բացահայտել է իր և իր զուգընկերոջ սեռական կողմնորոշումը: Իր զուգընկերոջ ընտանիքի անդամները, տեսնելով վերը նշված նկարները, հրաժարվել են շփվել նրա հետ, իսկ իրեն պատճառվել է բարոյահոգեբանական վնաս: Ոմն «Անյութան» նշված հարթակներում սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել դիմողի և իր զուգընկերոջ հասցեին և իրեն սպառնացել, որ իր ընտանիքի անդամներին կհայտնի իր սեռական կողմնորոշման մասին: Փաստացի, այդ լուսանկարները և տեսաձայնագրությունները հայտնվել են համացանցում և հազարավոր

օգտատերեր դիտել են դիմողի և իր զուգընկերոջ ինտիմ լուսանկարները, որի հետևանքով դիմողը հայտնվել է հոգեբանական ծանր վիճակում: Դեպքի առիթով ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 204-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով: Նախաքննությունը ընթացքի մեջ է:

Դեպք 49

Նույնասեռական տղամարդու ինստագրամյան հաշվից վերցվել են նրա կիսամերկ նկարները և տարածվել «xaytarak.am» տելեգրամյան ալիքում՝ հանրայնացնելով նրա սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության կամ արտահայտման մասին տեղեկություններ: Տելեգրամյան հրապարակումը ուղեկցվել է վիրավորական և սպառնալիք պարունակող արտահայտություններով: Տղամարդը չի ցանկացել դիմել իրավապահ մարմիններին՝ նրանց նկատմամբ վստահության չունենալու պատճառով:

Շորթում

Դեպք 50

Տղամարդը «Գրինդր» ծանոթությունների հավելվածով ծանոթացել է մի տղամարդու հետ, որը նրան հանդիպման է հրավիրել: Սակայն հանդիպմանն այդ տղամարդը մոտեցել է մեկ այլ տղամարդու հետ, որի մոտ եղել է ատրճանակ: Նրանք սկսել են սպառնալ, վիրավորական և հայհոյախառն արտահայտություններ հնչեցնել տղամարդու նկատմամբ և 600 հազար դրամ գումար պահանջել նրանից: Այնուհետև, նրանք վերցրել են տղամարդու հեռախոսը, ուսումնասիրել նկարները, փորձել օնլայն վարկ ձևակերպել, և քանի որ դրա համար անձը հաստատող փաստաթուղթ է պահանջվել, չեն կարողացել վարկ ձևակերպել: Միաժամանակ, նրանք սպառնացել են հանրայնացնել տղամարդու մասին անձնական տեղեկությունները, եթե նա «չուղղվի», այսինքն՝ դադարի լինել գեյ:

Դեպք 51

Նույնասեռական տղամարդը օգտվել է տաքսի ծառայությունից, որի տղամարդ վարորդի հետ նա ավտոմեքենայում սեռական հարաբերություն է ունեցել: Արդյունքում տաքսու վարորդին հայտնի են դարձել նրա բնակության և աշխատանքի վայրերը: Տաքսու վարորդը տղամարդուն առաջարկել է շարունակել շփումը՝ նրա կողմից նրան «լավ նայելու» (ֆինանսական առումով) պայմանով: Մեկ անգամ տղամարդը վարորդին 50.000 ՀՀ դրամ է տվել: Մեկ շաբաթ անց տաքսու վարորդը նրանից կրկին 100.000 ՀՀ դրամ է պահանջել, սակայն տղամարդը հրաժարվել է գումար տալ: Դրանից հետո տաքսու վարորդն անձին հայտնել է, որ եթե իրեն գումար չտրամադրի, ապա աշխատանքի վայրում և հարազատներին կտեղեկացնի նրա սեռական կողմնորոշման մասին, նրանց կտրամադրի իր մեքենայում նախկինում ունեցած սեռական հարաբերության գաղտնի ձայնագրությունը: Տղամարդը չի ցանկացել դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 52

Տղամարդը նույնասեռական անձանց ծանոթությունների «Գրինդր» հավելվածի միջոցով ծանոթացել է օտարերկրացի տղամարդու հետ: Օտարերկրացի տղամարդը իրենց վիդեոհաղորդակցությունը ձայնագրել է և նրան սպառնացել, որ կբացահայտի իր սեռական կողմնորոշումը համացանցում, եթե տղամարդը նրան չվճարի 15.000 դոլարին համարժեք ՀՀ դրամ: Տղամարդը, որպես ապացույց, պահել է բոլոր այն հաղորդակցությունների էկրանանկարները, որոնք պարունակում են սպառնալիքները, սակայն նա չի ցանկացել դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 53

«Tik-Tok» սոցիալական կայքում նույնասեռական տղամարդն ուղիղ եթերում հայտնել է, որ ցանկանում է տեսանյութ նկարահանել, որի համար իրեն անհրաժեշտ են ավտոմեքենա ունեցող մարդիկ: 2024 թ. մարտի սկզբին՝ ուշ երեկոյան, «Telegram» հեռահաղորդակցման ծրագրային հավելվածի միջոցով մի տղամարդ պայմանավորվել է նրա հետ հանդիպել և տեսանյութ նկարահանել: Պայմանավորվելուց հետո այդ անծանոթ տղամարդն իր ավտոմեքենայով մոտեցել է Երևան քաղաքի շենքերից մեկի մոտ, որտեղ հանդիպել է նույնասեռական տղամարդուն: Տղամարդը նստել է նրա ավտոմեքենան և միասին ուղևորվել են դեպի Երևան քաղաքում գտնվող մի բլուր: Այդտեղ, հերթական տեսանյութը նկարահանելու համար՝ տղամարդն իջել է ավտոմեքենայից՝ ավտոմեքենայի մեջ թողնելով իր բջջային հեռախոսը և իր անվամբ առկա 2 բանկային քարտ: Նույն պահին, անծանոթը հեռացել է նշված վայրից՝ հափշտակելով 50.000 դրամ արժողությամբ բջջային հեռախոսը: Այնուհետև, հաջորդ օրը՝ ուշ երեկոյան, այդ տղամարդը «Telegram» հեռահաղորդակցման ծրագրային հավելվածի միջոցով շանտաժ է արել՝ սպառնալով, որ հափշտակված բջջային հեռախոսի մեջ առկա տղամարդու անձնական տվյալները՝ այդ թվում նրա սեռական հարաբերություն ունենալու վերաբերյալ տեսագրությունները նրա հարազատների և այլ անձանց շրջանում կտարածի: Նա տղամարդուց պահանջել է 480.000 ՀՀ դրամ արժողությամբ վերջինիս այլ մոդելի բջջային հեռախոսը, սակայն տղամարդը հրաժարվել է դա անել և դիմել է ոստիկանություն: Հարուցվել է քրեական գործ, որից հետո տղամարդը հրաժարվել է իրավաբանական աջակցությունից և հաշտվել իրավախախտի հետ:

Դեպք 54

Տրանս կինը և իր ընկերուհին գումար են վաստակել սեքս աշխատանքով զբաղվելով: Այնուհետև հաճախորդներից մեկը սկսել է սպառնալ նրանց և գումար պահանջել: Նա սպառնացել է, որ հակառակ դեպքում կտարածի իրենց հասցեն: Տրանս կանայք դիմել են ոստիկանություն, սակայն ոստիկանությունում ասել են. «եթե գան խփեն դուռը, զանգեք ոստիկանություն»: Ի վերջո, բռնարարը, չստանալով գումարը, տարածել է նրանց հասցեն:

Մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի ոտնահարման այլ դեպքեր

Դեպք 55

Տղամարդը գտնվել է Գյումրի քաղաքի սրճարաններից մեկում, երբ սրճարանի տնօրենը նույն սրճարանի աշխատակցին ասել է, թե՝ «Դու ես իրեն սրճարան բերել», որից հետո բացահայտելով նրա գեյ լինելը սրճարանում ներկա գտնվողների մոտ՝ բացահայտ և գոռալով դիմել է դիմողին. «Սրա ոտքը էլ ստեղ չտեսնեմ, թե չէ քացով ծեծելով կլարեմ»: Այնուհետև սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել տղամարդու հասցեին, որից հետո տղամարդը լքել է սրճարանը: Նա դիմում է ներկայացրել, որի առիթով ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզի քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածի 1-ին մասով: Գործը նախաքննության փուլում է:

Դեպք 56

Նույնասեռական տղամարդը վարձակալել է բնակարան և տան սեփականատիրոջ հետ կնքել է պայմանագիր, որը չի ներկայացրել նոտարական վավերացման: Նա տեղափոխվել է նոր վարձակալած բնակարան, բնակարանում գտնվող սառնարանի վրա փակցրել է նվեր ստացած և իր կողմից գնած հուշանվեր-մագնիսները: Դրանց մեջ եղել է նաև Հռոմից բերված Միքելանջելոյի Դավթի արձանի հուշանվեր կրկնօրինակը: Տղամարդու հետ նույն բնակարանում համատեղ վարձակալությամբ բնակվում են նաև երկու այլ անձինք: Նրանք, տեսնելով Դավթի արձանիկը, խնդրել են, որ սառնարանի վրայից հեռացնի, քանի որ իրենց տհաճություն է պատճառում մերկ արձանի առկայությունը: Նրանք ենթադրել են, որ եթե տղամարդը մերկ տղամարդու արձանիկ է փակցնում սառնարանին, ապա գեյ է, ու այդ մասին ասել են բրոկերին, որն էլ հաստատել է դա: Մի քանի օր անց բրոկերը զանգահարել է տղամարդուն և խնդրել ազատել բնակարանը՝ պատճառաբանելով, որ վարձատուի՝ Եվրոպայից ժամանող բարեկամներն են այդ բնակարանում ապրելու: Այնուհետև տղամարդը զանգահարել է անշարժ գույքի գործակալին և հիշեցրել, որ ինքը և տան սեփականատերը կնքել են պայմանագիր և չի կարող իրեն բնակարանից դուրս հանել: Գործակալը նշել է. «բա այդ ի՞նչ մագնիս ես փակցրել սառնարանի վրա, գիտե՞ս՝ որ երկրում ես ապրում»: Տղամարդն այդ խոսքերից հասկացել է, որ բնակարանն ազատելու պահանջը պայմանավորված է ոչ թե Եվրոպայից բնակարանի սեփականատիրոջ բարեկամների գալով, այլ իր գեյ լինելու հանգամանքով: Նա չի դիմել իրավական պաշտպանության:

Դեպք 57

Տղամարդն իր նույնասեռական սեռական կողմնորոշման պատճառով պարբերաբար ենթարկվում է խտրականության ու ծաղրի համագյուղացիների կողմից: Նա կոշկակար է եղել ու մոր աջակցությամբ երկար տարիներ գումար է վաստակել կոշկակարության միջոցով: Տղամարդու մոր մահից հետո խտրական վերաբերմունքը ավելի սրվել է. երբ անձը տնից դուրս է գալիս նրան հայհոյում են և այլևս չեն տանում կոշիկներ վերանորոգման համար: Տղամարդը վախե-

նում է, որ դա կազդի նաև իր որդու վրա: 2024 թ. հուլիսին տղամարդը դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին, սակայն չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 58

Նույնասեռական տղամարդը 2024 թ. փետրվարին նույնասեռական անձանց ծանոթությունների համար նախատեսված «Գրինդր» սոցիալական հավելվածի միջոցով ծանոթացել է մի տղամարդու հետ, որը շփումը շարունակելու նպատակով առաջարկել է մուտք գործել «Telegram» հեռահաղորդակցման հավելված: Որոշ ժամանակ շփման ընթացքում նրանք մի շարք հանդիպումներ են ունեցել, որից հետո 2024 թ. փետրվարի կեսերին՝ ուշ երեկոյան, այդ տղամարդը հերթական անգամ առաջարկել է հանդիպել: Երևան քաղաքի ռեստորաններից մեկի մոտակայքում նրանք հանդիպել են և այդ տղամարդու ավտոմեքենայով ուղևորվել են դեպի Երևան քաղաքի փողոցներից մեկի խաչմերուկ: Այնուհետև, այդ տղամարդը մեքենան կայանել է նշված վայրին հարակից վայրում և ավտոմեքենայի մեջ սեռական հարաբերություն է ունեցել նույնասեռական տղամարդու հետ: Սեռական հարաբերություն ունենալուց հետո իրավախախտը, նրա իրերը հափշտակելու միտումով նրան առաջարկել է դուրս գալ իր ավտոմեքենայից՝ խնդրելով, որ փակի բեռնախցիկի դուռը: Տղամարդու՝ մեքենայից իջնելուց հետո իրավախախտը մեքենան արագ վարելով հեռացել է նշված վայրից՝ գողանալով վերջինիս պատկանող 475.000 ՀՀ դրամ արժողությամբ բջջային հեռախոսը, ականջակալները, լիցքավորիչը և 5000 ՀՀ դրամ: Տղամարդը դիմել է ոստիկանություն, որի արդյունքում հարուցվել է քրեական գործ, սակայն որոշ ժամանակ անց տղամարդը հրաժարվել է իրավաբանական աջակցությունից և հաշտվել իրավախախտի հետ:

Մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը պաշտպանության բավականին լայն շրջանակ ունի՝ պայմանավորված այն հանգամանքով, որ միտված է պաշտպանելու անձի ֆիզիկական և հոգեկան կայունությունը, ներդաշնակությունն ու անձեռնմխելիությունը: Այն դեպքերում, երբ արարքի ծանրությունը այն չի հասցնում անմարդկային վերաբերմունքի կամ դրա առանձնահատկությունները այն չեն դարձնում արժանապատվությունը նվաստացնող արարք, կարող ենք համարել, որ առկա է մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք: Իհարկե, բոլոր նշված դեպքերը նկարագրված են հակիրճ և դրանց առավել հանգամանալից ուսումնասիրությունն ու հետևանքների գնահատումը կարող է ազդել նաև որակման վրա:

Այստեղ կրկին պետք է շեշտել, որ հանցավորներին առավել ինքնավստահ է դարձնում տուժողների խոցելի դրությունը՝ պայմանավորված նախ այն հանգամանքով, որ տուժողը չի ցանկանա իր սեռական կողմնորոշման մասին հայտնել իրավապահ մարմիններին, և երկրորդ, իրավակիրառ մարմինների կողմից դեպքերի ոչ արդյունավետ քննության անցկացումը, ինչը իրավախախտներին տալիս է համոզում, որ միևնույն է պատասխանատվության չեն ենթարկվի:

Ի տարբերություն նախորդ տարիների, այս տարվա ընթացքում փողոցում անծանոթ անձանց կողմից ֆիզիկական բռնության դեպքեր չեն արձանագրվել:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:

2. Յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված դեպքերում և կարգով ունի մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 38[33]

Հասարակությունը պետության հիմքն է: Այնուամենայնիվ, հասարակությունը միատարր զանգված չէ: Այն բաղկացած է անհատներից, ովքեր տարբեր կերպ՝ իրենց կարողությունների և ինքնության շրջանակներում ազդեցություն են ունենում հասարակական կյանքի և զարգացման վրա: Հասարակության զարգացման երաշխիքը անհատի կրթությունն է: Միևնույն ժամանակ, կրթությունը թույլ է տալիս անհատին լիարժեք մաս կազմել հասարակական կյանքին՝ ապահովելով իր համար բարեկեցիկ կյանքի սոցիալական և տնտեսական պայմաններ: Ուստի, հասարակության գիտակցությունը բարձրացնելու, նրա շարունակական զարգացումն ապահովելու համար պետությունն ունի պոզիտիվ պարտավորություն՝ ստեղծելու կրթության իրավունքի իրացման պայմաններ: ՀՀ Սահմանադրությունը ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Միևնույն ժամանակ, ոչ մեկին չի կարելի մերժել կրթության իրավունքը[34]: Կրթություն ստանալու իրավունքը ներառում է ոչ միայն դպրոցական (միջնակարգ) կրթությունը[35], այլ նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում[36] (ԲՈՒՀ) սովորելը: Պետությունը, բարձրագույն ուսումնական հաստատություններին տալով ինքնակառավարման իրավունք[37] և կանխատեսելով սովորողի՝ ուսումնական հաստատությունից հեռացնելու հնարավորությունը, ամրագրում է, որ սովորողին ուսումնական հաստատությունից հեռացնելը կարող է իրականացվել այդ հաստատության ներքին ակտերով սահմանված դեպքերում և կարգով[38]: Այս կարգավորումը հանդես է գալիս որպես բուհում սովորող անձանց կրթության իրավունքի պաշտպանության լրացուցիչ երաշխիք:

Դեպք 59

Աղջիկն իր նույնասեռական սեռական կողմնորոշման պատճառով ունեցել է խնդիրներ քոլեջում ու մանկատանը, որի հետևանքով հեռացել է երիտասարդա-

33 ՀՀ սահմանադրություն, 2015 թ. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723
34 Մարդու Իրավունքների և Հիմնարար Ազատությունների Պաշտպանության Մասին Կոնվենցիայի՝ Փոփոխված 11-րդ Արձանագրությամբ, Հոդված 2. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=20870
35 ՄԻԵԴ վճիռ թիվ 24515/94. Բահրի Սուլակն ընդդեմ Թուրքիայի
36 ՄԻԵԴ վճիռներ. Լեյլա Շահին ընդդեմ Թուրքիայի, § 141; Մյուրսել Էրեն ընդդեմ Թուրքիային, § 41
37 ՀՀ Սահմանադրություն, 2015 թ. հոդված 38, մաս 3-րդ
38 ՀՀ օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», հոդված 17, մաս 6-րդ. https://www.arlis.am/documentview.aspx?docid=103999

կան կենտրոնից: Նրան պարբերաբար ճնշել և բուլիինգի են ենթարկել, ասել են, որ նա լեսբի է, չեն գնացել հետը շրջելու, որովհետև պատճառաբանել են, որ այցելուն ունի այլ սեռական կողմնորոշում, և չեն ուզում իրենց տեսնեն նրա հետ: Քոլեջում ևս շարունակվել են բուլիինգի դեպքերը, ինչի հետևանքով աղջիկը ստիպված է եղել փոխել քոլեջը և բուլիինգից խուսափելու համար դադարել է գնալ նաև քոլեջ: Պարբերական ճնշումների արդյունքում աղջիկը բազմիցս փորձ է արել փախչել երիտասարդական կենտրոնից և 2024 թ. փետրվարին մոր կողմից տրված ստորագրության հիման վրա վերջնական հեռացել է այնտեղից: Ճնշումների հետևանքով աղջիկը դուրս է մնացել կրթությունից: Դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին 2024 թ. ապրիլին, սակայն չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 60

Նույնասեռական տղան դպրոցում 10 տարի շարունակ ենթարկվել է բուլիինգի իր ենթադրյալ սեռական կողմնորոշման համար: Նա չի տեղեկացրել ոչ ոքի, որ ենթարկվում է բուլիինգի՝ հաճախ վախենալով, որ իրեն նորից չծեծեն և չվիրավորեն: Երբեմն հիվանդ է ձևացել, որ մայրը չուղարկի դպրոց: Իսկ երբ գնացել է, դասընկերները ծեծել ու վիրավորել են նրան: Դպրոցում սովորելու ընթացքում տղան փոխել է 10 դպրոց, բայց բոլոր դպրոցներում մի քանի ամիս անց նորից սկսել են իրեն բուլիինգի ենթարկել: Նա դիմել է կազմակերպությանը 2024 թ. հուլիսին, սակայն երբևէ չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 61

Անչափահաս տղան ապրում է ՀՀ մարզերից մեկում: Նա տեղափոխվել է ավագ դպրոց, սակայն, նախկին դպրոցում, որտեղ իմացել էին նրա գեյ լինելու մասին, անընդհատ բռնության էին ենթարկել: Նոր դպրոցում սեպտեմբերի 1-ից սկսած համադասարանցիները հայհոյանքներ են հնչեցրել նրա հասցեին, բուլիինգի են ենթարկել, քաշքշել են, ֆիզիկական բռնության են ենթարկել: Պարզվել է, որ նրա սեռական կողմնորոշման մասին տեղեկատվությունը տարածել են նախկին դասընկերները: Տղան չի դիմել իրավապահ մարմիններին:

Զարգացող հասարակության հիմքը կրթությունն է: Անկախ նրանից, թե ինչ պատճառով է անձը զրկվում հավասար պայմաններով կրթություն ստանալու իրավունքից, դա վնասում է առողջ հասարակության ձևավորմանն ու զարգացմանը: Միևնույն ժամանակ, նման իրավիճակները խոսում են հասարակության ու պետության նկատմամբ իշխող քաղաքական ուժերի վերաբերմունքի մասին, որոնք հանդիսանում են հանրակրթության պատասխանատուն: Ընկալելով և կարևորելով կրթության հավասար հնարավորությունների դերը հասարակության և պետության համար, իշխող քաղաքական միավորները պետք է ներդնեն ջանքեր և ռեսուրսներ՝ ապահովելու համար հնարավորինս որակյալ, անվտանգ և հավասար կրթական պայմաններ: Ինչպես նշվեց, պետությունն ունի պարտավորություններ ապահովելու համար մարդու իրավունքների արդյունավետ իրացումը: Զուգահեռաբար, պետությունը պարտավորված է հատուկ պաշտպանություն ապահովել երեխաների համար՝ երաշխավորելով նրանց համար զարգացման հավասար հնարավորություններ: Հանրակրթական դպրոցում աշակերտների

նկատմամբ որևէ տեսակի խտրական, պիտակավորող վերաբերմունքը վտանգավոր երևույթ է: Այն կարող է ուղղակիորեն աշակերտին դուրս մղել կրթությունից և որպես հետևանք մղել մի այնպիսի կյանք, որտեղ անձը մերժված է հասարակության կողմից և չունի սոցիալիզացվելու, հասարակական կյանքի մասը կազմելու, բնականոն և բարեկեցիկ կյանքով ապրելու հնարավորություն: Այնպիսի միջավայրում, ինչպիսին է հայաստանյան հասարակությունը, անձի պիտակավորումը, թիրախավորումը և մեկուսացումը անխուսափելի է, եթե անձի սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը բացահայտվել է այնպիսի իրավիճակում, երբ նա չունի արդեն իսկ կայացած սոցիալական դիրք և տնտեսական պայմաններ: Իսկ երբ խոսքը վերաբերում է հանրակրթական հաստատություններին, և տուժողները անչափահաս անձինք են, ովքեր չեն կարող ունենալ իրենց կայացած սոցիալ-տնտեսական դիրքն ու պայմանները, ապա նրանց դուրս մղումը հասարակական կյանքից և հնարավորություններից անխուսափելի է:

Ի տարբերություն բարձրագույն ուսումնական հաստատությունների, հանրակրթական դպրոցներում պետությունն ունի ոչ միայն պատասխանատվություն, այլ նաև առավել լայն վերահսկողական հնարավորություններ: Հաշվի առնելով ոլորտի կարևորությունը, ուսուցիչները և վարչական կազմը պետք է վերապատրաստվեն ոչ միայն իրենց մասնագիտական կարողությունների զարգացման համար, այլ նաև աշակերտների շրջանում բազմազանության, հանդուրժողականության և հավասարության գաղափարների սերմանման կարողությունների առումով: Ուսուցիչները, նաև պետք է ունենան բավարար կարողություններ և գիտելիքներ՝ նույնականացնելու բուլիինգն ու վատ վերաբերմունքը աշակերտների միջև և համապատասխան հմտություններ՝ միջամտելու և հարթելու առաջացած խնդիրները: Ցանկացած աշակերտ պետք է հանրակրթական դպրոցում իրեն զգա հոգեպես ապահով, ունակ լինի կենտրոնանալ կրթության և ինքնազարգացման վրա: Ավելին, պետությունը պարտավորություն է կրում դպրոցական հասակում երեխաներին կրթել նաև մարդկային առանձնահատկությունների և տարբերությունների վերաբերյալ, ներառյալ՝ սեռականությունը՝ բացառելու համար հետագայում մեկը մյուսի տարբերություններով պայմանավորված թիրախավորումն ու վատ վերաբերմունքը: Դա ներառում է նաև սեռական կրթությունը՝ մի կողմից ԼԳԲՏ+ անձանց համար, որոնք պետք է տեղեկացված լինեն իրենց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության մասին՝ կարողանալու համար հասկանալ իրենց առանձնահատկությունն ու ներդաշնակ լինել իրենց ինքնության հետ, և մյուս կողմից՝ մյուս երեխաների համար, որպեսզի ընդունեն այլ սեռական կողմնորոշում կամ գենդերային ինքնություն կամ արտահայտում ունեցող երեխաներին և նրանց նկատմամբ չցուցաբերեն բռնի, ճնշող, ծաղրական վերաբերմունք: Միայն այդ պարագայում հնարավոր կլինի ձևավորել տեղեկացված և ներդաշնակ հասարակություն:

Այնուհանդերձ, ինչպես արձանագրված իրավիճակն է վկայում, ուսուցիչները ոչ միայն սեռական դաստիարակություն և հարգանքի միջավայր չեն կարողանում սերմանել երեխաների շրջանում, այլ նաև, ընդհակառակը, իրենք են մեկուսացնում ԼԳԲՏ+ անձանց և ճնշումներ գործադրում: Սա պետության կողմից մարդու իրավունքների խախտում է՝ պետական հաստատությունների կողմից երեխաների մի շարք իրավունքների ուղղակի խախտումներով: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ պետությունը, ձախողելով երեխաների՝

անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ լինելու իրավունքի պաշտպանությունը, խախտել է նաև կրթության իրավունքը, ինչը կարող է հանգեցնել հասարակության մի խմբի մարգինալացման, մեկուսացման, բացառման, միևնույն ժամանակ տարբեր խմբերի միջև անհանդուրժողականության և թշնամանքի: Եվ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դպրոցը հենց այն վայրն է, որտեղ անձը ձևավորվում է որպես հասարակության անդամ և քաղաքացի՝ բնականաբար չստանալով համապատասխան կրթություն և դաստիարակություն, չեն կարող հետագայում զերծ մնալ բռնություններից և իրավախախտումներից: Այսինքն, հիմնական կրթություն տրամադրող հաստատությունների իրավիճակը լիովին կարող է բացատրել այլ հարաբերություններում առկա խտրականությունն ու ատելությամբ պայմանավորված հանցագործությունները:

Իրավապահ մարմիններին չդիմելու պատճառներից մեկը այն է, որ երեխաները պետք է իրենց սեռական կողմնորոշման մասին հայտնեն, ինչը բնականաբար հասանելի կդարձվի իրենց ծնողներին: Այս ամենը կարող է հանգեցնել անձի համար էլ ավելի լուրջ խնդրի՝ ընտանեկան բռնության:

Չնայած նրան, որ աշակերտները հազվադեպ են ունենում հասանելիություն հասարակական կազմակերպություններին և մեր կողմից հավաքագրված տվյալները իրավիճակի ընդամենը մի փոքը հատվածն են ներկայացնում, մտահոգիչ է, որ այսպիսի դեպքեր են արձանագրվում ամեն տարի, իսկ տեղեկատվությունը փոխանցվում է պետական մարմիններին՝ ընդհուպ մինչև ամենաբարձր կառավարման մարմին: Սակայն, դեռևս որևէ գործուն միջամտություն տեղի չի ունեցել իրավիճակի փոփոխության ուղղությամբ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք:

2. Յուրաքանչյուր աշխատող ունի աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունք: Աշխատանքից ազատման հիմքերը սահմանվում են օրենքով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 57[39]

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության և աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունք: Այս կարգավորումը մեզ հուշում է, որ յուրաքանչյուրը կարող է ընտրել իր ցանկացած մասնագիտությունը, զբաղվել իր նախընտրած աշխատանքով: Գործատուի և աշխատողի հարաբերությունները հիմնվում են կայունության սկզբունքի վրա, ուստի աշխատանքից առանց հիմքերի ազատման դեպքում աշխատակիցը կարող է դատական կարգով պաշտպանել իր իրավունքները: Որպես աշխատանքային հարաբերությունների կայունության երաշխիք՝ պետությունը աշխատանքից ազատման հիմքերի նախատեսումը չի թողնում կողմերի հայեցողությանը՝ խուսափելու համար կամայականություններից, այլ սահմանում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով[40]: ԼԳԲՏ+ անձինք խտրականության են բախվում կյանքի տարբեր ոլորտներում: Նրանց նկատմամբ տարբերակված մոտեցումն ու նախապաշարումները, փաստորեն, վնաս են հասցնում ոչ միայն անձի հոգեբանական ամբողջականությանը, այլ նաև սոցիալական ապահովությանը: Մասնավորապես, անձանց կյանքի որակի վրա հատկապես ազդում է աշխատանքային իրավահարաբերություններում դրսևորվող խտրականությունը: Անձը կարող է կորցնել իր ապրուստի միջոցը ոչ թե իր մասնագիտական ոչ բավարար որակների կամ աշխատանքում թերացման պատճառով, այլ, ընդամենը, անձնական հատկանիշի: Ստորև ներկայացված են 2024 թ.-ին արձանագրված որոշ օրինակներ:

Դեպք 62

Տրանս տղամարդը, փորձելով փախչել ՌԴ-ում հետապնդումներից, տեղափոխվել է ՀՀ և ունի ապաստան հայցողի կարգավիճակ: Բազմիցս փորձելով աշխատանք գտնել՝ նա բախվել է խնդիրների: Երբ համաձայնել են աշխատանքի ընդունել և ներկայացրել է անձնագիրը, որտեղ գենդերի վերաբերյալ նշումը չի համապատասխանում իր արտաքինին, անձին մերժել են աշխատանք տալ առանց բացատրության:

39 ՀՀ սահմանադրություն, 2015 թ. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723
40 ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդվածներ 109-114. https://www.arlis.am/documentview.aspx?docid=146722

Դեպք 63

Տղամարդը աշխատանքի համար դիմել է Երևանում գտնվող մի սրճարան՝ մենեջերի հաստիքի համար: Սրճարանի տնօրենը անցկացրել է հարցազրույց, և դիմողը պայմանավորվածություն է ձեռք բերել ժամանակավոր պրակտիկա անցնելու մասին այն պայմանով, որ եթե իրեն լավ դրսևորի, կանցնի հիմնական աշխատանքի: Նույն օրը դիմողն անցել է իր պրակտիկան, սակայն սրճարանի ղեկավարությունը տեղեկացել է, որ դիմողը նույնասեռական է: Այս հանգամանքը իմանալով՝ տնօրինությունը հայտնել է, որ այդ պատճառով դադարեցնում են նրա պրակտիկան: Տնօրենը դիմողին տեղեկացրել է, որ այս մի քանի ժամվա ընթացքում իրենց ծանոթները զանգահարել են և ասել, թե ում են աշխատանքի ընդունել՝ նշելով, որ սոցիալական ցանցերում կան դիմողի ինտիմ բնույթի տեսանյութեր: Տնօրենը նաև հայտնել է, որ տղամարդը՝ լինելով նույնասեռական, չի կարող իրենց սրճարանում որպես մենեջեր շփվել հաճախորդների հետ, քանի որ այդ հանգամանքը կարող է հայտնի դառնալ հաճախորդներին և բացասաբար անդրադառնալ սրճարանի բարի համբավի վրա:

Դեպք 64

Նույնասեռական տղամարդուն նախորդ աշխատանքից հեռացրել են՝ պատճառաբանելով, որ կանացի վարքագիծ ունի: Վերջին աշխատավայրում մենեջերը կանչել է իր մոտ ու ասել, որ մազերը ներկել է՝ առանց մտածելու, թե հաճախորդները ինչ կմտածեն և հեռացրել է աշխատանքից: Տղամարդը չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 65

Անչափահաս տղայի աշխատավայրում տեղեկացել են նրա գեյ լինելու մասին: Այդ մասին իմանալուց հետո գործընկերները միասին քննարկել են, թե ինչպես վարվել նրա հետ: Արդյունքում տղային տնօրենը տեղեկացրել է, որ նրանք գիտեն իր սեռական կողմնորոշման մասին, և խնդիրներից խուսափելու համար նրան առաջակել է դիմում գրել և հեռանալ, քանի որ հաճախորդների հետ խնդիրներ կունենա: Տղան չի դիմել իրավապահ մարմիններին:

ԼԳԲՏ+ անձինք, ում աշխատանքի իրավունքը խախտվել է՝ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով, չեն ցանկանում դիմել դատարան նախ և առաջ այն պատճառով, որ չունեն իրենց աշխատանքից ազատման պատճառների մասին ապացույցներ, իսկ ՀՀ օրենսդրությունը, չունենալով խտրականության դեմ համապարփակ օրենսդրություն և չնախատեսելով խտրականության դեպքերի քննության դատավարական առանձնահատկությունները, խտրական վերաբերմունքի ապացուցման բեռը թողնում է տուժած անձի վրա:

Այսինքն անձինք, ում սեռական կողմնորոշումը ինչ-ինչ հանգամանքներում բացահայտվում է, դատապարտված են ապրել սոցիալապես անապահով պայմաններում՝ չունենալով որևէ մեխանիզմ պաշտպանելու իրենց շահերը և իրենց համար ապահովելու արժանապատիվ կենսապայմաններ:

Նախորդ տարիներին ևս արձանագրվել են սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով աշխատանքի չընդունելու կամ աշխատանքից ազատման դեպքեր, որոնք, սակայն, վստահաբար չեն արտահայտում այս ոլորտում խտրականության ամբողջ ծավալը: Սա պայմանավորված է նախ նրանով, որ մարդիկ հնարավոր է չիմանան պատճառը և չունենան բավարար գիտելիքներ նույնականացնելու համար իրենց նկատմամբ խտրական վերաբերմունքը, ինչի արդյունքում իրենց հեռացրել են աշխատանքից: Հաջորդ պատճառն այն է, որ ինչպես նշվեց, խտրականության դեպքերի արդյունավետ քննության մեխանիզմներ առկա չեն, հետևաբար անձինք անգամ կարևոր չեն համարում դեպքերի վերաբերյալ հասարակական կազմակերպություններին տեղեկացնելը՝ չունենալով որևէ ակնկալիք:

Փաստորեն, եթե անձը չունի բավարար սոցիալական պայմաններ և դիրք, չի կարող իրեն թույլ տալ ազատ կերպով արտահայտել իր ինքնությունը, քանի որ ամեն պահի, հասարակական բոլոր հարաբերություններում կենթարկվի խարանի, խտրականության, բացառման. չի ունենա բարեկեցիկ կյանքի և աշխատանքի հնարավորություն, ինչը կհանգեցնի նաև բնակարանային ապահովման և այլ սոցիալական խնդիրների:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պետության կողմից պարբերաբար, տարբեր հարթակներում ներկայացվում են օրենսդրական փոփոխությունների և իրավակիրառ մարմինների վերապատրաստումների վերաբերյալ տվյալներ: Կառավարությունը շարունակում է խտրականության դեմ օրենքի մշակման աշխատանքները:

Միևնույն ժամանակ, փաստ է, որ 2022 թ.-ի հուլիսից ուժի մեջ մտած Քրեական օրենսգիրքը գործում է արդեն իսկ երկուս ու կես տարի, սակայն այս ընթացքում ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ տեղի ունեցած ատելության շարժառիթով կատարված հանցագործությունները որպես այդպիսին չեն որակվել և պատշաճ քննության չեն ենթարկվել: Միջազգային մարմինների առաջ պետությունը շարունակում է պարտավորություններ ստանձնել՝ արդյունավետ կերպով քննելու սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնությամբ պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունները և ատելության խոսքը. այս ուղղությամբ, այնուամենայնիվ, որևէ դրական տեղաշարժ չի արձանագրվում:

Վերոշարադրյալ տվյալներից կարելի է եզրակացնել, որ 2024 թ.-ի ընթացքում ԼԳԲՏ+ անձանց իրադրությունը չի բարելավվել, այլ ընդհակառակը՝ էլ ավելի մեծ թվով մարդու իրավունքների խախտումներ են արձանագրվել: Մեկ այլ բացասական տեղաշարժ է այն, որ ավելի քիչ թվով մարդիկ են ցանկություն հայտնել դիմել իրավապահ մարմիններին և ավելի քիչ թվով դեպքեր են ընթացք ստացել, այսինքն, որևէ կերպ չի բարձրացել տուժողների վստահությունը իրավապահ համակարգի նկատմամբ: Բացառություն է կազմում թերևս մեկ դանակահարության դեպք, որտեղ տուժողը հանդիսացել է ԱՄՆ քաղաքացի և դեպքը եղել է ԱՄՆ դեսպանատան ուշադրության ներքո:

Կարելի է եզրակացնել, որ պետության կողմից ձեռնարկված միջոցառումները դեռևս բավարար չեն ատելության հիմքով հանցագործությունները բազմակողմանի հասցեավորելու համար: Գտնում ենք, որ այսպիսի դեպքերը պետք է լինեն հատուկ ուշադրության ներքո և դրանց քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնող դատախազության կողմից ևս պետք է հատուկ ուշադրության արժանանան արարքի ատելության շարժառիթի ցուցիչները: Այս առումով առաջնային կարևորություն ունի դեպքերի գրանցումը հատուկ ձևաչափով և տվյալների հավաքագրումը՝ վիճակագրության վարման, իրավիճակի և վարվող քաղաքականության արդյունքների դիտարկման նպատակով:

Չնայած նրան, որ արձանագրված դեպքերի մեծամասնությունը ընտանեկան բռնության դեպքեր են, գտնում ենք, այնուամենայնիվ, որ առավել մեծ թվով խտրականության դեպքեր պարզապես չեն հասնում կազմակերպությանը՝ խտրականությունից տուժած անձանց՝ իրավակիրառ համակարգի նկատմամբ անվստահության պատճառով՝ չունենալով արդյունքի որևէ ակնկալիք:

Որպես շարունակական խնդիր է մնում խտրականության դեպքերի վերհանման և դրանց պարագայում իրավական պաշտպանության արդյունավետ մեխանիզմների խնդիրը, քանի դեռ խտրականության դեմ համապարփակ օրենք գոյություն չունի: Քրեական նոր օրենսգրքով նախատեսված խտրականության արգելքին վերաբերող հոդվածը, թերևս, անիմաստ է այն պարագայում, երբ որևէ այլ իրավական ակտով նախատեսված չէ խտրականության, դրա տեսակների, քննության առանձնահատկությունների և խտրականության դեպքերի քննության

իրավասության շրջանակների հետ կապված հարցերը:

Արդարադատության նախարարության կողմից դեռևս մշակվում է «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագիծը, ինչը դեռևս որևէ դրական արդյունք ԼԳԲՏ+ անձանց պաշտպանության համար մեխանիզմի ստեղծման առումով չունի: Մասնավորապես, դրանում բացակայում են սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը՝ որպես խտրականությունից պաշտպանված հատկանիշներ, նախատեսված չէ հանրային շահի պաշտպանության հայցով դատարան դիմելու՝ հասարակական կազմակերպությունների իրավունքը, ինչը էական նշանակություն ունի հատկապես անուղղակի խտրականության դեպքերի պարագայում և, իհարկե, հավասարության մարմնի ձևավորման ընթացակարգում և պայմաններում հաշվի չեն առնված անդամների բազմազանության ապահովմանն ուղղված չափանիշները: Այս դրույթները հատկապես կարևոր են հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԼԳԲՏ+ անձինք հանդիսանում են նշյալ օրենքի առաջնային շահառուն՝ որպես երկրում առավելապես խտրականության ենթարկվող խումբ:

Այսպիսով, պետական մարմինները ձախողել են ստեղծել երկրում այնպիսի իրավիճակ, որտեղ անձինք կարող են անկախ իրենց որևէ անձնական հատկանիշից, օգտվել հավասար իրավական պաշտպանության մեխանիզմներից և իրենց ապահով զգալ: Իսկ համապատասխանաբար այն անձինք, ովքեր քրեորեն պատժելի արարք գործելու մտադրություն ունեն, իրենց զգում են ապահով և իրենց արարքը՝ արդարացված՝ ելնելով համատարած անպատժելիության մթնոլորտից: Հետևաբար, էական չէ, թե տուժած անձինք դիմել են իրավական պաշտպանության որևէ մեխանիզմի, թե ոչ, միևնույն է, կարող ենք համարել, որ պետությունը ձախողել է ԼԳԲՏ+ անձանց համար ապահով միջավայր ստեղծելու իր պարտավորությունը՝ տարիներ շարունակ անտեսելով, մատնելով անգործության և չձեռնարկելով որևէ միջոց հասարակության կողմից վստահություն ձեռք բերելու և որպես արդյունավետ պաշտպանության միջոց դիտարկվելու համար:

ԲԱԺԻՆ 2.

ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԼԳԲՏ+ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ

1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 42[41]

Արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 77[42]

Խոսքի ազատությունը՝ որպես ժողովրդավարական հասարակության հիմնասյուներից մեկը, ներառում է արտահայտման գրեթե ցանկացած ձև ու բովանդակություն պարունակող խոսքը՝ ներառյալ անձի գենդերային ինքնությունն ազատորեն արտահայտելու իրավունքը, որն ընդգրկում է գաղափարներ, կարծիքներ և տեղեկատվություն անձի ինքնության վերաբերյալ: Միևնույն ժամանակ, խոսքի ազատությունը յուրաքանչյուրի իրավունքն է արտահայտել իր դիրքորոշումը տարբեր հարցերի և հասարակությանը հետաքրքրող իրավիճակների շուրջ: Սակայն, խոսքի ազատությունը բացարձակ իրավունք չէ և ենթակա է որոշակի սահմանափակումների[43]: Այն ներառում է գաղափարներ և կարծիքներ արտահայտելու ազատությունը, բայց միևնույն ժամանակ պարտականություն է սահմանում խուսափել անձի նկատմամբ այնպիսի արտահայտություններից, որոնք պարունակում են վիրավորանք այլ անձանց նկատմամբ, խախտում են նրանց իրավունքները[44]: Մասնավորապես, խոսքի ազատության իրավունքը չի ենթադրում ատելության խոսքի ազատություն[45]:

Ատելության խոսքի կարգավորումները

Ատելության խոսքի սահմանումը դեռևս չունի մեկ համընդհանուր կերպով ճանաչված ձևակերպում, սակայն գործնականում միջազգային մարմինների կողմից տրվել են պայմանական մեկնաբանություններ:

Ատելության խոսք կարող են համարվել արտահայտման այն բոլոր ձևերը, որոնք տարածում, դրդում, խրախուսում կամ արդարացնում են ռասսայական ատելությունը, այլատյացությունը (քսենոֆոբիան), հակասեմիտիզմը կամ ատե-

41 ՀՀ սահմանադրություն, 2015 թ. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723
42 Նույն տեղում
43 ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ. 34
44 ՄԻԵԴ վճիռ. Էրբականն ընդդեմ Թուրքիայի. թիվ 59405/00
45 ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ. 11

լության այլ ձևերը՝ հիմնված անհանդուրժողականության վրա, ներառյալ՝ արտահայտված ծայրահեղ ազգայնականությամբ և ազգակենտրոնությամբ (էթնոցենտրիզմով) անհանդուրժողականությունը, փոքրամասնությունների, ներգաղթյալների (միգրանտների) և միգրանտային ծագում ունեցող անձանց նկատմամբ խտրականությունը և թշնամանքը[46]:

ՄԱԿ-ի Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին դաշնագրի 19(2)-րդ հոդվածը ճանաչում է արտահայտման ազատությունը, հաստատելով, որ «Յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի ինֆորմացիա ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը»[47]:

Դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել հետևյալ պայմանների առկայության դեպքում.

ա) պետք է սահմանվեն օրենքով և լինեն անհրաժեշտ,

բ) ուղղված լինեն այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելուն, պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանությանը,

գ) լինեն անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում այս շահերի պաշտպանության համար: Այս պայմաններից միայն մեկի կամ երկուսի առկայությունը բավարար չէ, որպեսզի սահմանափակումը համարվի օրինական:

Դաշնագրի 20(2)-րդ հոդվածով սահմանվում է. «Ազգային, ռասսայական կամ կրոնական ատելության օգտին որևէ ելույթ, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում, պետք է արգելվի օրենքով»:

Ատելության խոսքը դրսևորվում է ոչ միայն բռնությունների, խտրականության կոչերով կամ դրանց արդարացմամբ և ջատագովությամբ, այլ նաև որոշակի խմբերի նկատմամբ վիրավորական, նվաստացուցիչ, թշնամական վերաբերմունքով, անհանդուրժողականության սերմանմամբ: Այն մի դեպքում կարող է հանգեցնել խմբերի կամ անհատների նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների, իսկ մյուս կողմից կարող է խախտել որոշակի հատկանիշներով առանձնացող անձանց հոգեբանական ամբողջականությունը՝ պատճառելով հոգեկան տառապանք կամ ճնշվածություն:

Ատելության խոսքի համար նախատեսված պատասխանատվությունը պայմանավորված է դրա ծանրությամբ: Ատելության խոսքի ծանրությունը որոշելու համար հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները[48].

- Համատեքստը, որում այն հնչում է. սա ներառում է նաև քաղաքական իրադրությունը, որում կարող է խոսքը առավել սուր հնչել կամ կարող է առավել քիչ ուշադրության արժանանալ:

46 Նախարարների կոմիտեի թիվ R (97) 20 հանձնարարական Ատելության խոսքի վերաբերյալ. 1997 թ. https://bit.ly/2wa4QoE

47 ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 1966 թ. հոդված 19(2), https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/international-covenant-civil-and-political-rights

48 ՄԱԿ-ի մարդու իրավունքների բարձր հանձնակատարի տարեկան զեկույց՝ ներկայացված ազգային, ռասայական, կրոնական ատելության հրահրման արգելքի վերաբերյալ փորձագետների աշխատաժողովին, 2013, https://documents.un.org/doc/undoc/gen/g13/101/48/pdf/g1310148.pdf

- Դրա հեղինակը, նրա դերը, հասարակության կողմից նրա նկատմամբ վերաբերմունքն ու վստահության աստիճանը:
- Նպատակը. կարևոր է՝ արդյո՞ք նման խոսքը հնչեցվել է դիտավորյալ՝ որոշակի հետևանք առաջացնելու նպատակո՞վ, թե՞ անզգուշությամբ: Նպատակը ատելության խոսքի անօտարելի մասերից մեկն է՝ արգելված ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 20(2)-րդ հոդվածով, քանի որ այն համարվում է ատելություն, խտրականություն պարունակող վերաբերմունքի ջատագովություն:
- Բովանդակությունը. կարևոր է, թե խոսքը որքանով է ազդեցիկ և որքանով կարող է որոշակի վնաս պատճառել:
- Տարածման միջոցները, լսարանը. կարևոր է, թե ինչ ծավալի հանրային տարածում է գտել խոսքը:
- Հավաստիությունը, ներառյալ՝ ռիսկային լինելը. ատելության խոսքի հրահրման պատճառով հետագա գործողությունների արգելքի համար դրանք պետք է լինեն իրական և պարունակեն խտրական, թշնամական կամ բռնության գործողությունների արդյունքում նույնականացվող ռիսկեր:

Այս պայմանները հիմնված են խտրականություն, թշնամանք կամ բռնություն հրահրող ազգային, ռասսայական կամ կրոնական ատելության ջատագովության արգելքի վերաբերյալ գործողությունների Ռաբաթ պլանի վրա, որը պարունակում է պետություններին ուղղված առաջարկներ՝ նույնականացնելու և պայքարելու ատելության խոսքի դեմ: Այն առաջարկում է հենց վերոնշյալ վեցաստիճան թեստը, որից ելնելով կարելի է գնահատել, թե արդյոք ատելություն պարունակող արտահայտությունը պետք է հանգեցնի քրեական պատասխանատվության, թե ոչ[49]:

Այս հանգամանքների վերլուծությունից ելնելով կարող է տարանջատվել ատելության խոսքի համար պատասխանատվության աստիճանը: Այսպես, օրինակ՝ Հայաստանյան իրավիճակում, երբ հանրության 95 տոկոսը բացասական դիրքորոշում ունի նույնասեռական և տրանսգենդեր անձանց նկատմամբ[50], ատելության խոսքի նույնիսկ ամենաանվնաս թվացող դրսևորումը կարող է խորացնել հասարակության բևեռացումն ու հանգեցնել իրավախախտումների: Այն դեպքում, երբ ատելության խոսքի հեղինակը պետական պաշտոնատար անձ է, դրա վտանգավորության աստիճանն առավել բարձր է ոչ միայն պաշտոնյայի վայելած հեղինակության բերումով, այլ նաև՝ պայմանավորված անպատժելիության մթնոլորտի ձևավորմամբ: Հայաստանյան փորձը կրկին ցույց է տալիս, որ ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ատելության խոսքը ակտիվ կիրառվում է պաշտոնատար անձանց և քաղաքական գործիչների կողմից, սակայն որևէ պատասխանատվության չի հանգեցնում[51]:

Անզգուշաբար հնչած ատելության խոսքը պետք է արժանանա քննադատության և որոշ դեպքերում, նույնիսկ, պատասխանատվության հանգեցնի, սակայն այս դեպքում քրեական պատասխանատվությունը պարտադիր չէ: Մասնավորապես,

49 Գործողությունների Ռաբաթ պլան. https://www.ohchr.org/Documents/Issues/Opinion/SeminarRabat/Rabat_draft_outcome.pdf
50 «Նախապաշարումներից հավասարություն. Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն», Փինք իրավապաշտպան ՀԿ, 2016 թ. https://pinkarmenia.org/wp-content/uploads/2024/02/From-Prejudice-to-Equality-Armenian.pdf
51 Հայաստանում պաշտոնատար անձանց կողմից դրսևորված ատելության խոսքը ԼԳԲՏ անձանց նկատմամբ. 2019 թ. https://pinkarmenia.org/wp-content/uploads/2019/05/hatespeech_hy.pdf

այդպիսի արտահայտությունները կարող են դատապարտվել պետական պաշտոնատար անձանց կողմից, կարող են նախատեսվել նաև կարգապահական պատասխանատվության միջոցներ ինչպես պետական մարմինների ծառայողների, այնպես էլ՝ մասնագիտական հանրույթների ներկայացուցիչների համար՝ որպես էթիկայի խախտում: Խոսքի բովանդակության վերլուծության համար հատկապես կարևոր է դրա հետևանքների գնահատումը. այն կարող է անձանց որոշակի խմբի պահել վախի մթնոլորտի և հոգեբանորեն ճնշված վիճակում՝ անընդհատ սպառնալիքի ներքո: Ատելության խոսքի հասանելիությունը, այսինքն, տարածումը հանրության լայն շրջանում, պայմանավորված է ինչպես այն հանգամանքով, թե որտեղ է այն հնչել, այնպես էլ նրանով, թե արդյո՞ք այն տարածվել է զանգվածային լրատվության միջոցներով, թե՞ ոչ: ԶԼՄ-ների կողմից նման խոսքի տարածումը ևս պետք է ստանա իրավական գնահատական: Ի վերջո, ատելության խոսքը պետք է լինի իրական և հստակ, այսինքն, խոսքում օգտագործված արտահայտությունները պետք է կամ պարունակեն հստակ թշնամանք, որոշակի հատկանիշով պայմանավորված վիրավորանք, բռնության, խտրականության կոչեր, կամ պետք է ընկալելի լինեն որպես այդպիսին. դրա ոչ միանշանակ ընկալումը նվազեցնում է վտանգավորության աստիճանը:

Ներպետական իրավակարգավորումները

2020 թ.-ի ապրիլին տեղի ունեցած քրեական օրենսգրքի փոփոխությամբ քրեական պատասխանատվություն նախատեսվեց անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչի, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու, ինչպես նաև այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելու համար[52]: Այսինքն, ՀՀ օրենսդրությամբ քրեական պատասխանատվություն է նախատեսված ատելության խոսքի առավել վտանգավոր դրսևորման, այն է՝ բռնության հրապարակային կոչերի կամ բռնության արդարացման համար:

Գրեթե չորս տարի գոյություն ունեցող այս կարգավորումը, սակայն, արդյունավետ չի կիրառվում ԼԳԲՏ+ անձանց դեմ վերջիններիս սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված ատելության խոսքի ծանր դրսևորումների՝ բռնության հրապարակային կոչերի պարագայում: Հանցագործության մասին հաղորդումների հիման վրա քրեական գործեր չեն հարուցվել հիմնականում այն պատճառաբանությամբ, որ ենթադրյալ իրավախախտը իրացրել է իր արտահայտման ազատությունը կամ որ նրա արտահայտությունները իրական վտանգ չեն սպառնում և դրանք կատարվել են պահի ազդեցության տակ: Հարկ է նշել, որ բռնության հրապարակային կոչերի հանցակազմը ձևական է, այսինքն՝ դրանով նախատեսված արարքի համար քրեական պատասխանատվությունը վրա է հասնում անկախ հետևանքներից: Ինչպես նախորդ բաժնում նկարագրված է, ատելության խոսքի պարագայում էական չէ, թե հենց այդ խոսքը դարձել է բռնության պատճառ, թե ոչ: Ինքնին թշնամական, վիրավորական արտահայտությունները, խտրականության կամ բռնության կոչերը

52 ՀՀ Քրեական օրենսգիրք, հոդված 330. https://www.arlis.am/documentview.aspx?docid=153080

համարվում են միջամտություն անձի մասնավոր կյանքի իրավունքի նկատմամբ՝ առաջին հերթին, այնուհետև՝ նաև համայնքի յուրաքանչյուր ներկայացուցչի իրավունքի նկատմամբ, քանի որ եթե անգամ խոսքը մեկ անձի է ուղղված, սակայն պայմանավորված է նրա սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ, ապա վնասում է նաև նույն հատկանիշը կրող մյուս անձանց, իսկ երրորդ հերթին նաև ամբողջ հասարակությանը:

2022 թ.-ի հուլիսին ուժի մեջ մտած քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ռասայի, ազգի, էթնիկական կամ սոցիալական ծագման, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքի կամ այլ հիմքերի վրա անձի կամ խմբի նկատմամբ անձնական կամ սոցիալական բնույթի հանգամանքներով պայմանավորված ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամություն հրահրելուն կամ քարոզելուն ուղղված խոսքի, ինչպես նաև այդ նպատակով նյութերի կամ առարկաների տարածման համար[53]:

Չնայած նրան, որ 2022 թ.-ի մայիսի 17-ին հրապարակված Օգանեզովան ընդդեմ Հայաստանի գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը անդրադարձել է թե օրենսդրական կարգավորումների բացին, թե գործնականում դրանց անարդյունավետ կիրառմանը, որևէ միջոց դեռևս չի ձեռնարկվել կատարելու համար ՄԻԵԴ վճռով Հայաստանի վրա դրված պարտավորությունները: Մասնավորապես, ***Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հստակ դիրքորոշում է արտահայտել առ այն, որ ատելության խոսքը կարգավորող իրավանորմը պետք է որպես պաշտպանված հատկանիշ ուղղակիորեն նախատեսի սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը,*** որպեսզի այն համարվի իրավական պաշտպանության արդյունավետ միջոց ԼԳԲՏ+ անձանց համար: Փաստացի, Հայաստանում ոչ միայն անգամ չի քննարկել օրենսդրական կարգավորումներում լրացում անելու հարցը, այլ նաև շարունակում է անգործություն ցուցաբերել ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ բռնության կոչերին համապատասխան իրավական արձագանք տալու հարցում: Այս իրադրությունը ևս մեկ անգամ փաստում է, որ բռնության կոչերի կամ արդարացման համար քրեական պատասխանատվություն նախատեսող քրեաիրավական նորմի առկա ձևակերպումը, որում նման խոսքից պաշտպանության ենթակա հատկանիշների ցանկում սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ուղղակիորեն նշված չեն և միայն տրված է ***«անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներ» արտահայտությունը, չի կարող համարվել արդյունավետ գործիք:***

ԼԳԲՏ+ անձանց խնդիրների շահարկումը և ատելության խոսքը 2024 թ.-ի ընթացքում

Սույն բաժնում մեջբերված ատելության խոսքի օրինակները մեջբերված են բառացի, փոփոխված է միայն կիրառված տառերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ զեկույցի լեզուն հայերենն է, իսկ մեկնաբանությունները հաճախ լատինատառ կամ կիրիլյան այբուբենի տառերով են գրված:

2024 թ.-ի ընթացքում շարունակվել է քաղաքական նպատակներով ԼԳԲՏ+

53 ՀՀ Քրեական օրենսգիրք, հոդված 330. https://www.arlis.am/documentview.aspx?docid=153080

համայնքի անվան շահարկումը թե ընդդիմադիր քաղաքական գործիչների, թե իշխող քաղաքական ուժի կողմից:

Սահմանադրության փոփոխության հարց

Որոշ շրջանակներ սկսեցին քննարկել Սահմանադրության փոփոխության հարցը և չնայած նրան, որ փոփոխությունների հարցը բոլորովին այլ հանգամանքներում և այլ կոնտեքստում էր բարձրացել և որևէ առնչություն չուներ ԼԳԲՏ+ անձանց իրավունքների հետ, ավելին, անգամ չուներ մարդու իրավունքների հետ, կրկին որոշ խմբեր սկսեցին օրակարգ բերել նույնասեռական ամուսնությունների թեման: Ակնհայտ է, որ խնդիր էր դրված հասարակության շրջանում ձևավորել դժգոհություն և բացասական վերաբերմունք սահմանադրական փոփոխության օրակարգի շուրջ և քանի որ ժողովուրդը առավել քիչ է հետաքրքրված քաղաքական հիմնավորումներով և գուցե հենց քաղաքական գործիչներն են թույլ քաղաքական հիմնավորումներ ներկայացնելու կարողությունից, մնում է մանիպուլացնել խոցելի հարցերը՝ քաղաքական նպատակներին հասնելու համար: Օրինակ, որպես ռազմական փորձագետ ներկայացող Հայկ Նահապետյանը հայտարարել է, թե նոր Սահմանադրությամբ ջնջվելու է Արցախը և օրինականացվելու է ԼԳԲՏ համայնքը[54]:

Այս անձանց անգամ այնքան չի հետաքրքրում իրենց խոսքի իրատեսականությունն ու որակը, որ կիրառում են բացարձակապես անընկալելի արտահայտություններ: Օրինակ՝ որևէ հարց չի ծագում առ այն, թե ինչ է նշանակում ԼԳԲՏ համայնքի օրինականացումը: Չէ՞ որ ԼԳԲՏ անձինք հասարակ քաղաքացիներ են և իրենց ծննդյան փաստի ուժով արդեն հանդիսանում են օրինական: Խոսքի աբսուրդը որևէ մեկին չի կաշկանդում շարունակել այս անհիմն և ատելությունից բացի այլ պտուղ չտվող քարոզչական մանիպուլատիվ արշավը:

Որպես ատելության խոսքի կարկառուն հեղինակ, հանրային այս մանիպուլիացիաներից կրկին անմասն չի մնացել Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչ Արծվիկ Մինասյանը, ով պնդել է, թե Ստամբուլյան կոնվենցիայի համապատասխան ընտանեկան արժեքների նկատմամբ հերթական այլանդակությունն են ուզում անել, մասնավորապես, Սահմանադրությամբ հանել նույնասեռական ամուսնությունների արգելքը:

Հատկանշական է, որ Արծվիկ Մինասյանը հանդիսանում է այն անձանցից, ով 2012 թ.-ին Դի-Այ-Ուայ ակումբի պայթեցումից հետո հանդես էր եկել բռնությունն ու ատելությունը արդարացնող խոսքով և ինչի շուրջ հետագայում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 2022 թ.-ի վճռով կայացրեց Հայաստանի դեմ վճիռ՝ ճանաչելով խոսքը որպես ատելության խոսք, ինչը ենթակա է օրենքով սահմանափակման, և պարտավորեցրեց պետությանը համապատասխանեցնել օրենսդրությունը՝ ԼԳԲՏ+ անձանց ատելության խոսքից արդյունավետ պաշտպանելու նպատակով:

Այն, որ անգամ այդ վճռից տարիներ անց նույն անձը կրկին հրապարակային հանդես է գալիս անհանդուրժողականություն սերմանող և մանիպուլատիվ լուրերի միջոցով հասարակության շրջանում փոխադարձ ատելության մթնոլորտ ձևավորող խոսքով, պետության ձախողումն է: Պետությունը, փաստորեն, Մարդու

54 Նոր Սահմանադրությամբ ջնջվելու է Արցախը և օրինականացվելու է ԼԳԲՏ համայնքը. Հայկ Նահապետյան. https://antifake.am/am/news/47356

իրավունքների եվրոպական դատարանի վճռից հետո ոչ միայն որևէ դիրքորոշում չի արտահայտել քաղաքական գործիչների կողմից տարածվող ատելության խոսքի անընդունելիության և դատապարտելիության վերաբերյալ, այլ նաև չի համապատասխանեցրել օրենսդրությունը Դատարանի պահանջներին և ունակ չէ արդյունավետ կերպով պաշտպանել ԼԳԲՏ+ համայնքին որևէ ծանրության ատելության խոսքից:

Ավելին, իշխող քաղաքական ուժի կողմից ևս սերտվել է քաղաքական մանիպուլիացիաներից դիվիդենտներ շահելու և քաղաքական խնդիրներ լուծելու մեթոդը: Մասնավորապես, նույն կերպով, ինչպես ընդդիմադիր գործիչներն են փորձել իշխող քաղաքական ուժի ներկայացուցիչներին կապել ԼԳԲՏ+ անձանց և հարցերի հետ՝ նրանց նկատմամբ ձևավորելու հասարակության բացասական վերաբերմունքը, այդպես էլ իշխող ուժի ներկայացուցիչներն են սկսել կիրառել այդ մեթոդը՝ չունենալով որևէ կաշկանդվածություն այն հանգամանքով, որ որպես կառավարություն իրենց պարտավորությունն է պաշտպանել հասարակության ցանկացած խմբի և ցանկացած անհատի և ոչ թե օգտագործել նրանց խոցելի կարգավիճակը քաղաքական շահերի սպասարկման նպատակով:

Այսպես, նրանք փորձում են Գարեգին Բ կաթողիկոսին ու մյուս հոգևոր առաջնորդներին կապել ԼԳԲՏ+ համայնքի ու ԼԳԲՏ+ քարոզի հետ՝ նմանօրինակ կեղծ նյութեր տարածելով ֆեյսբուքյան տարբեր խմբերում[55]:

Դպրոցական դասագրքերի փոփոխությունների շուրջ հերթական աղմուկը կապված էր այն բանի հետ, որ «Կերպարվեստ-4» դասագրքում խորհրդանշանների մասին թեմայի շրջանակներում ներկայացվել են մի քանի օրինակներ, որոնցից մեկը խնձոր է՝ ներկված ծիածանագույն: Բնականաբար, այս հանգամանքը ներկայացվել է որպես երեխաների շրջանակներում նույնասեռականության «պրոպագանդա»՝ տարածելով անհիմն հանրային խուճապ[56]:

Մեկ այլ թաքնված «քարոզչություն» է բացահայտել փաստաբանների պալատի նախկին նախագահ, «Զարթոնք» կուսակցության ղեկավար Արա Զոհրաբյանը: Ըստ նրա՝ «ԽաղԱլիք» հեռուստաալիքով ցուցադրվում է «Նիմոնա» մուլտֆիլմը, որն, ըստ հեռուստաալիքի, չորս տարեկանից մեծ երեխաների համար է, բայց մուլտֆիլմում ներկայացված է նաև երկու հասուն տղամարդու միմյանց համբուրելու տեսարան[57]:

Զոհրաբյանը, հղում կատարելով «Երեխայի իրավունքների մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասին, որով արգելվում է երեխայի առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող, բռնության և դաժանության պաշտամունք քարոզող, մարդկային արժանապատվությունը նսեմացնող, ընտանիքը վարկաբեկող, իրավախախտումներին նպաստող զանգվածային տեղեկատվության և գրականության տարածումը, նշել է, թե օրենսդրությունը դեռ պաշտպանում է երեխաներին:

Հատկանշական է, որ լինելով փաստաբանների պալատի նախկին նախագահը, Արա Զոհրաբյանը նշյալ հոդվածին տվել է այնպիսի մեկնաբանություն, որը

55 Արշավ՝ եկեղեցու դեմ. ո՞ւմ հովանու ներքո և ինչպե՞ս են փորձում կաթողիկոսին կապել ԼԳԲՏ քարոզի հետ. https://mediahub.am/post/2dd2c9f0718ad9e8
56 ԼԳԲՏ գույներով խնձոր՝ 4-րդ դասարանի կերպարվեստի դասագրքում. https://oragir.news/hy/material/2024/02/02/105458
57 ԼԳԲՏ քարոզը ներթափանցել է հայկական որոշ հեռուստաալիքներ. ահազանգում են մասնագետները. https://iravunk.com/?p=274788&l=am

ինքնին հակասում է մարդու իրավունքների համընդհանրության սկզբունքին: Ավելին, պարբերաբար այսպիսի մանիպուլատիվ և թշնամանք սերմանող կեղծ տեղեկատվություն տարածելով՝ նա ինքն է նպաստում իրավախախտումների ծավալի աճին և այլոց նկատմամբ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի նորմալացմանը: Բացի այդ, հավակնելու մուտք գործել քաղաքականություն, Արա Զոհրաբյանը պետք է էլ ավելի զգուշավոր լիներ հասարակության շրջանում ատելություն ու թշնամանք սերմանելու հարցում, քանի որ որպես քաղաքական գործիչ, ենթադրվում է, որ նա ունի էլ ավելի մեծ հավակնություններ, այն է՝ իշխանության ձգտումը, ինչը ենթադրում է պատասխանատվություն պետության ցանկացած քաղաքացու հանդեպ և պետության տարածքում գտնվող ցանկացած մարդու իրավունքների պաշտպանության ապահովում: Հարկ է նկատել, որ Արա Զոհրաբյանն իր քաղաքական գործունեության ընթացքում արդեն տևական ժամանակ է զբաղված է նմանատիպ մեթոդներով անհանդուրժողականություն սերմանելով, սակայն որևէ կերպ պետական մարմինների կողմից որևէ արձագանք չի հնչում, որևէ կերպ այս վարքագիծը չի դատապարտվում կամ քննադատվում:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում լրացումների քննարկումներ

Ինչպես նախորդ բաժնում է նշվել, դրական փոփոխություն է տեղի ունեցել ընտանեկան բռնության դեմ օրենքով, որով վերջապես նախատեսվել է «զուգընկեր» հասկացությունը, ինչը պաշտպանություն կնախատեսի ամուսնաընտանեկան հարաբերությունների մեջ չգտնվող անձանց համար, որոնք ունեցել են զուգընկերային հարաբերություններ՝ ներառյալ նույնասեռ:

Այս փոփոխության թաքնված նպատակների վերաբերյալ հայտարարությունները չեն ուշացել: Այն որակվել է որպես նույնասեռականների քողարկված պաշտպանություն[58], ինչպես նաև հնչել է կարծիք առ այն, որ ՔՊ-ականները օրենքով պաշտպանության տակ են առնում նույնասեռականներին և արգելում կուսության ստուգումը[59]:

Անմասն չեն մնացել նաև ԱԺ պատգամավորները: Գեղամ Նազարյանը, օրինակ, մտահոգություն է բարձրացրել, թե ընտանիքներին փորձում են հավասարեցնել «համասեռամոլների» հետ[60]:

Կրոնական տեսանկյունից օրենքի լրացումը գնահատել են Մայր աթոռը և Արա

58 «Հրապարակ». ՔՊ-ականները օրենքով պաշտպանության տակ են առնում նույնասեռականներին. Նախագիծ է մշակվել. https://news.am/arm/news/805027.html
59 «Ժողովուրդ». ՔՊ-ն խմբակցության նիստ կգումարի՝ պատրաստվելու նույնասեռականներին պաշտպանող նախաձեռնության քննարկմանը. https://news.am/arm/news/805454.html
60 Ընտանիքին փորձում եք հավասարեցնել համասեռամոլների հետ այս օրենքով. Գեղամ Նազարյան. https://youtu.be/Zd2Y2W_5hBI

Զոհրաբյանը: Մայր աթոռը, մասնավորապես տարածել է հայտարարություն օրենքի լրացումների վտանգավորության վերաբերյալ[61]:

Արա Զոհրաբյանը այս անգամ օրենքը մեկնաբանել է ոչ թե որպես փաստաբան կամ քաղաքական գործիչ, այլ այս անգամ՝ որպես եկեղեցու հետևորդ: Նա նշել է հետևյալը[62]՝

- «Որովհետև Հայաստանյաց առաքելական եկեղեցին հենց ընտանիքի առաջին պաշտպանն է: Ընտանիքը հենց եկեղեցու ընդհանուր գաղափարաբանությամբ Աստծո ստեղծած միությունն է՝ տղամարդու և կնոջ: Եվ սրանից դուրս բոլոր անբնական դրսևորումները, բնականաբար, չեն կարող ընտանիք համարվել»:
- «Եթե այս իշխանությանը հաջողվի այս ամենն իրագործել, մենք գնալու ենք այս այլասերված նորմերի միջազգային կոնվենցիաները ճանաչելու ճանապարհով, և կոտրելու ենք մեր ընտանիքի ավանդական հասկացությունը»:

Այսպիսով, Ազգային ժողովի կողմից օրենքի նման լրացումը ողջունելի է և այն առաջնահերթ քայլ է, որը ընտանեկան բռնության դեմ օրենսդրությունը դարձնում է էլ ավելի արդյունավետ և գործուն մեխանիզմ, որը պաշտպանություն է նախատեսում ընտանեկան բռնության նկատմամբ խոցելի ցանկացած անձի համար:

Ակնհայտ է, որ օրենքի կարգավորման նպատակն է յուրաքանչյուր անհատի, անկախ իր ընտանեկան հարաբերությունների գրանցված լինելու կամ համատեղ բնակվելու հանգամանքից, լինի պաշտպանված: Հետևաբար, հարց է ծագում, թե ինչի համար են այս անձինք դեմ Հայաստանի Հանրապետությունում բնակվող անձանց բռնությունից պաշտպանող օրենսդրությանը: Թերևս այս հարցի պատասխանն էլ հանգում է նրան, որ պարզապես նման իրավիճակները օգտագործվում են կեղծ շահարկումների և քաղաքական շահերի համար՝ վարկաբեկելու քաղաքական իշխանությանը և շահելու լայն հասարակության համակրանքը, որը դեռևս շարունակում է լինել մեծամասամբ չընդունող և անհիրազեկ:

Այստեղ, իհարկե, կրկին հարկ է անդրադառնալ պետության թերացմանը հասարակությանը կրթելու, իրազեկելու, հանդուրժողականություն սերմանելու հարցում: Ոչ մի քայլ գրեթե յոթ տարվա ընթացքում (ինչ տեղի է ունեցել հեղափոխություն և կառավարության փոփոխություն) չի ձեռնարկվել հանրության շրջանում ԼԳԲՏ+ անձանց վերաբերյալ տեղեկացվածությունը բարձրացնելու կամ ընդամենը անձի ինքնության նկատմամբ հարգանք ձևավորելու ուղղությամբ:

Տրանսգենդեր անձը մասնակցել է գեղեցկության մրցույթի

«Միս սթար ինթերնեյշնլ» գեղեցկության մրցույթին Հայաստանը ներկայացրել է տրանսգենդեր կին Դիանա Ղզրոյանը[63], ինչը լայն քննարկման առիթ է դարձել սոցիալական ցանցերում: Նախ և առաջ որոշ լրատվամիջոցների կողմից շահարկվել է այն հանգամանքը, որ Դիանա Ղզրոյանը սոցիալական

61 Օրենսդրության ԼԳԲՏաֆիկացում. https://iravunk.com/?p=280746&l=am
62 Կանխել բռնությո՞ւնը, թե՞ քանդել ընտանիքը. մասնագետը բացահայտում է նոր օրենքի վտանգները. https://arm.sputniknews.ru/20240413/kankhel-brnutjuny-te-qandel-yntaniqy-masnagety-bacahajtum-e-nvor-orenqi-vtangnery-74523651.html
63 Իշխանությունների կողմից դեռ արձագանք չի եղել, բայց ամեն ինչ առջևում է. տրանսգենդեր Դիանա Ղզրոյան. https://youtu.be/cRiwvWR4UvA

ցանցերում աջակցություն է հայտնել ներկա իշխող քաղաքական ուժին, ինչը մանիպուլատիվ այն քարոզչական շղթայի մասն է, թե իբր իշխանությունները աջակցում են ԼԳԲՏ+ անձանց[64]: Անձի մասնակցության շուրջ քաղաքում իրականացվել է հարցում, որի ընթացքում մարդիկ Հայաստանի ներկայացուցչի մասնակցությունը տրանսգենդեր անձանց գեղեցկության մրցույթին համարում են անընդունելի, նշելով, թե «մեր ազգին հարիր չի դա», «հիվանդ մարդիկ են, թող հիվանդությունը իրենց մեջ պահեն», «դա խայտառակություն ա», «զզվելի ա», վատ են վերաբերվում՝ ելնելով «ազգային արժեքներից, սովորույթներից», «գաղտնիք չի, որ Հայաստանը պարտավորություններ ա վերցրել, Եվրոպա մտնելու համար, գուցե երեք հարյուր տարի հետ մտնի, բայց մինչև էդ ազգի հիսուն տոկոսը պիտի դառնա տրանսգենդեր», «հույսով եմ, որ դարերի մեր կրթությունը վերջապես խոհեմություն կբերի մեր ազգին ու էդ արատից մենք կձերբազատվենք»[65]:

Մրցույթին մասնակցելու լուրի տարածումից անմիջապես հետո սոցիալական ցանցերում սկսվել է ատելության արշավ՝ վիրավորական, նվաստացուցիչ արտահայտություններից մինչև սպառնալիքներ և բռնության կոչերով զուգորդված: «Իրավունքի կողմ» իրավապաշտպան կազմակերպությունը հայտարարել է, որ Դիանա Ղզրոյանի նկատմամբ սպանության սպառնալիքներ, բռնության հրապարակային կոչերի վերաբերյալ հաղորդում է ներկայացվել իրավապահ մարմիններին:

Ատելություն և թշնամանք պարունակող խոսքը, նախ և առաջ խախտում է անձի հոգեկան ամբողջականությունը և կարող է առաջացնել բնականոն կյանքով ապրելու խնդիրներ: Այն կարող է անձի մոտ առաջացնել նաև վախի և տագնապի զգացում, ինչի արդյունքում անձը չի կարողանում իր նվազագույն կարիքների համար հասարակական հարաբերությունների մեջ մտնել և վարել նորմալ կենսակերպ: Այս հետևանքները կրում է ոչ միայն անձամբ թիրախավորված անձը, այլ նաև համայնքը՝ ամբողջությամբ վերցրած, քանի որ տարածված ատելության և անհանդուրժողականության կոչերը պայմանավորված են ոչ թե տուժողի անձով, այլ նրա անձնական հատկանիշով: Հետևաբար, այդ հատկանիշը կրող ցանկացած անձ պետք է ունենա մտավախություն, որ կարժանանա նման վերաբերմունքի իր ինքնության պատճառով:

Ստորև ներկայացված են սոցիալական ցանցերում տարածված բռնության կոչերի[66] մի քանի օրինակ՝

- «Եկել է քո նման տականքներին վերջ տալու ժամանակը: Աստված ջան երբ պիտի հայ ազգը ազատվի սենց շեղվածներից այս ուր ենք հասել»:
- «Երեխան ծնողին ա սպանում, մեր երիտասարդները իրար են դանակահա-

64 Կշնորհավորի՞ արդյոք Փաշինյանն իրեն ընտրած տրանսգենդերին. մի «գեղեցկուհու» պատմություն. https://oragir.news/hy/material/2024/09/16/129670
65 Մեր ազգին հարիր չի դա.քաղաքացիները՝ տրանսգենդերների մրցույթում Հայաստանի մասնակցության մասին. https://youtu.be/nn8HACMcK-4
66 Ֆեյսբուքյան որոնում. bit.ly/42ViIhH

ռում չկա թասիբով մի հատ տղա էս տականքի փորը թափի»:

- «Այլասերվածների դարաշրջան ենք մտել, դրանց պետք է մեկուսացնեն հասարակությունից, ուրիշ ոչինչ»:
- «Ինչ էլ քեզ լավ ես զգում գոնե գնաս կախվես ուղղակի զզվանք ես առաջացնում»:
- «Սրանց բոլորին պետք է վառել, պետք է վառել և նրանց ով այս տականքներին ոգևորում է»:

Ճնշում պատգամավոր Հովիկ Աղազարյանի նկատմամբ

Տարեվերջին աղմուկ բարձրացրեցին իշխող քաղաքական ուժի ներսում տեղի ունեցող հակասությունները, ինչի արդյունքում բազմաթիվ բարձր պաշտոններ զբաղեցնող անձինք վարչապետի պահանջով հրաժարականի դիմում ներկայացրին: Պահանջ էր ներկայացվել նաև Ազգային Ժողովի իշխող խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանին, ով հրաժարվեց վայր դնել պատգամավորական մանդատը: Այն բանից հետո, երբ իշխող ուժի առաջնորդների ճնշումներից հետո Հովիկ Աղազարյանը մերժեց մանդատը վայր դնելու պահանջը, ճնշումները շարունակվեցին այլ մակարդակներում: Մասնավորապես, տարածվեցին լուրեր, թե իր դեմ հարուցված քրեական գործի շրջանակներում զննության է ենթարկվել իր անձնական հեռախոսը և բացահայտվել են արտամուսնական կապեր ենթադրող նամակագրություններ, այդ թվում՝ արական սեռի անձի հետ[67]:

Ամբողջ մամուլով շրջանառվող այս լուրը փորձ էր արվում ներկայացնել որպես Հովիկ Աղազարյանի համբավն արատավորող հանգամանք, բացասական երևույթ՝ որպես ճնշման գործիք՝ նրան հարկադրելու հրաժարվել մանդատից: Նախ և առաջ, խնդրահարույց է անձի անձնական հեռախոսի անձնական նամակագրության տրամադրումը քննչական մարմնի կողմից քաղաքական վերնախավին, այնուհետև այդ տեղեկությունների տարածումը հասարակության շրջանում: Երկրորդ հերթին, խնդրահարույց է այն հանգամանքը, որ կրկին, այս անգամ իշխող քաղաքական ուժի կողմից, որպես բացասական երևույթ օգտագործվում է նույնասեռ հարաբերությունների մեջ լինելը՝ անձին վարկաբեկելու և ճնշելու նպատակով՝ անկախ նրանից՝ համապատասխանում է լուրը իրականությանը, թե ոչ:

Այս քայլով իշխանությունները ցույց տվեցին, որ ոչ միայն ունակ չեն պաշտպանելու նույնասեռական անձանց անձնական կյանքին վերաբերող տվյալները, այլ նաև կաշկանդված չեն դրանք օգտագործելու կամ գուցե կեղծելու նման տվյալներ՝ անձի նկատմամբ ճնշում գործադրելու համար: Այսինքն, կրկին օգտագործվում է հասարակության կողմից ԼԳԲՏ+ համայնքի նկատմամբ բացասական վերաբերմունքը քաղաքական նպատակներով, ինչը յուրաքանչյուր անգամ հանգեցնում է հասարակության շրջանում տարբեր խմբերի, այս դեպքում՝ ԼԳԲՏ+ անձանց և հասարակության մյուս մասի միջև անջրպետի խորացման՝ խթանելով անհանդուրժող վերաբերմունքն ու ատելությունը:

67 Աղազարյանը միասեռական կապի մեջ է եղել մի քանի տղամարդու հետ. մանրամասներ. http://medianews.site/534478/

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նկարագրված իրավիճակի վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ իշխանությունների կողմից չի կատարվում միջազգային փաստաթղթերով ստանձնած պարտավորությունները՝ ատելությանն ու անհանդուրժողականության դեմ պայքարի ուղղությամբ: Եթե դիտարկենք ատելության խոսքի դրսևորումները՝ ըստ ծանրության աստիճանների, առավել համակարգված և տեսանելի կարելի է պատկերացնել բոլոր քայլերի ձախողումները:

Սկսենք ամենածանր դրսևորումներից, այն է՝ հրապարակային բռնության և խտրականության կոչերը, դրանց ջատագովումն ու արդարացումը: Չնայած նրան, որ քրեական օրենսդրությամբ նման արարքները պետք է հանգեցնեն քրեական պատասխանատվության 2020 թ. ապրիլից սկսած, որևէ այդպիսի արարք ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ դեռևս չի պատժվել: Այսինքն, կարելի է եզրակացնել, որ շուրջ հինգ տարի գործող օրենսդրական կարգավորումը սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով ատելության խոսքից արդյունավետ պաշտպանություն չի կարող համարվել: Միևնույն ժամանակ այս կարգավորման հիմքով քրեական գործեր են հարուցվում քաղաքական դիրքորոշումներում կտրուկ որակումներ տված անձանց, որի իրավաչափ լինել-չլինելու հանգամանքը ուսումնասիրության առարկա է, ինչը դեռևս արված չէ: Այնուամենայնիվ, կարելի է եզրակացնել, որ կարգավորումը գործում է, սակայն ոչ ԼԳԲՏ+ անձանց համար, ովքեր առաջնահերթ ունեն դրա կարիքը, քանի որ թե քաղաքական գործիչների, թե հասարակ քաղաքացիների կողմից պարբերաբար թիրախավորվում են տարբեր հարթակներում:

Խոսելով ատելության խոսքի համեմատաբար առավել անվնաս դրսևորումների մասին, այն է՝ հրապարակային խոսքը, որ պարունակում է վիրավորական, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք, որը պետք է հանգեցնի պատասխանատվության քաղաքացիական կամ վարչական օրենսդրության համաձայն՝ կարող ենք եզրակացնել, որ պետությունը կիսատ է թողել այս ուղղությամբ տարվող աշխատանքը: Մասնավորապես, տևական ժամանակ իրականացված հետազոտություններից հետո դեռևս չեն կատարվել օրենսդրական փոփոխություններ այս հարցի կարգավորման շուրջ՝ չնայած նրան, որ դա նախատեսված էր նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրում:

Քննարկելով ատելության խոսքի առավել մեղմ դրսևորումները, այն է՝ հանրային կերպով որոշակի խմբի նկատմամբ անհարգալից, չընդունող վերաբերմունքի տարածումը, որի դեմ պետությունը պետք է կիրառի պատասխանատվություն չենթադրող գործիքակազմ՝ իրազեկվածության բարձրացման և հանրային խոսքով մերժման և դատապարտման տեսքով, կարելի է եզրակացնել, որ որևէ քայլ այս ուղղությամբ անգամ չի նախատեսվել:

Ավելին, ինչպես նոր միտումը ցույց է տալիս, իշխող քաղաքական ուժը, որը մինչ այժմ չեզոք էր մնում և որևէ կերպ ոչ պատասխանատվության էր ենթարկում, ոչ դատապարտում, ոչ էլ որևէ կերպ արձագանքում ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ատելության խոսքին, այժմ սկսել է կիրառել նույն մանիպուլատիվ միջոցները. անձանց ասոցացումը նույնասեռականության հետ՝ բացասական վերաբերմունք ձևավորելու և իր քաղաքական խնդիրները լուծելու նպատակով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼԳԲՏ+ անձանց իրավունքների առավելագույն պաշտպանությունը ՀՀ-ում ապահովելու համար առաջարկում ենք.

Պետական մարմիններին և քաղաքական ուժերին

- Հանրային կյանքի տարբեր ոլորտներում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունն ու բռնությունը կանխելու ուղղությամբ քայլեր նախատեսել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրում:
- Ընդունել խտրականության դեմ համապարփակ օրենք, որով կսահմանվի խտրականությունը, դրա տեսակները, խտրականության դեպքերի քննության ընթացակարգային առանձնահատկությունները, կնախատեսի պաշտպանված հատկանիշների ընդգրկուն ցանկ՝ ներառյալ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը, հասարակական կազմակերպությունների համար՝ հանրային շահի պաշտպանության գործերով իրավասուբյեկտություն, ինչպես նաև անկախ հավասարության մարմնի ձևա-վորման և գործունեության ընթացակարգ:
- Վերանայել ատելության հիմքով հանցագործություններն արգելող ՀՀ օրենսդրությունը, մասնավորապես՝ նախատեսել անձի նկատմամբ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության շարժառիթով կատարված հանցագործությունը՝ որպես քրեական պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:
- Վերանայել ատելության խոսքն արգելող ՀՀ օրենսդրությունը, սահմանել «ատելության խոսք» հասկացությունը, ՀՀ Քրեական օրենսգրքի բռնության կոչերի համար պատասխանատվություն նախատեսող դրույթում կատարել լրացում՝ որպես պաշտպանված հատկանիշ նախատեսելով նաև սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը:
- Փաստագրել և վարել ՀՀ-ում ատելության հիմքով հանցագործությունների, ներառյալ՝ անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության շարժառիթով կատարված հանցագործությունների վիճակագրություն՝ տեսանելի դարձնելով ատելության հիմքով հանցագործությունների խնդիրը ՀՀ-ում:
- Ապահովել արդարադատության մատչելիությունը ատելության հիմքով հանցագործություններից տուժած անձանց համար, մասնավորապես, նախատեսելով անձի իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ, որոնք կբացառեն անձի կրկնազոհացման վտանգը, կապահովեն անձի անվտանգությունը և կնախատեսեն վնասների հատուցման համընդգրկուն մեխանիզմներ:
- Դրսևորել քաղաքական կամք՝ արդյունավետ կիրառելու համար առկա օրենսդրությունը սեռական կողմնորոշմամբ և/կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի նկատմամբ:

- ԼԳԲՏ+ անձանց մարդու իրավունքների ոտնահարումներին անդրադառնալիս տալ հստակ գնահատականներ, չխուսափել մարդու իրավունքների ոտնահարումները դատապարտելուց:
- Իրականացնել իրավակիրառ մարմինների վերապատրաստում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով կատարված հանցագործությունների քննության նյութաիրավական և ընթացակարգային առանձնահատկությունների շուրջ՝ ապահովելու համար ամբողջական, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն:
- Կազմակերպել և իրականացնել դասընթացներ իրավակիրառ մարմինների հետ՝ ատելության հիմքով հանցագործությունների ենթարկված անձանց և վկաների հետ աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ:
- Համագործակցել իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների հետ՝ ստանալու համար առավել մանրակրկիտ տեղեկություն ԼԳԲՏ+ անձանց մարդու իրավունքների ոտնահարումների համակարգային բնույթ կրող ասպեկտների մասին:
- Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարները պետական մարմինների ծառայողների, մասնավորապես՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, ՀՀ Կառավարության ներկայացուցիչների և պաշտոնատար այլ անձանց շրջանում:
- Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարները հասարակությունում, մասնավորապես՝ հրապարակայնորեն հանդես գալ հանդուրժողականություն սերմանող հայտարարություններով և դատապարտել բռնության և անհանդուրժողականության որևէ դրսևորում:
- Կրթական հաստատությունների վարչակազմի և ուսուցչական կազմի համար իրականացնել պարբերական վերապատրաստումներ սեռականության, ԼԳԲՏ+ անձանց հետ զգայուն մոտեցման, նրանց համար բարդ տարիքային փուլում ինքնաճանաչմանը և ինքնադրսևորմանը աջակցելու վերաբերյալ:
- Վերահսկողություն իրականացնել դպրոցներից դուրս գալու կամ տեղափոխվելու դեպքերի նկատմամբ՝ պարզելու համար պատճառները և հնարավոր ճնշումների դեպքերը:
- Իրականացնել ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության պարագայում իրավապահ մարմինների կողմից զգայուն վերաբերմունքի մշտադիտարկում:
- Վարել սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով ընտանեկան բռնության դեպքերի վիճակագրություն:

Զանգվածային լրատվության միջոցներին

- Դադարեցնել ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ատելություն և անհանդուրժողականություն սերմանող հրապարակումները՝ հասարակությանը մատու-

ցելով գրագետ, էթիկապես ընդունելի և ԼԳԲՏ+ մարդու իրավունքների նկատմամբ հարգանք սերմանող նյութեր:

- Չշահարկել ԼԳԲՏ+ անձանց առնչվող ցանկացած թեմա՝ զերծ մնալով հասարակության մեջ անհարկի անհանդուրժողականություն և ատելություն սերմանելուց:
- Չտարածել պաշտոնատար անձանց և այլ գործիչների կողմից հնչած ատելություն, անհանդուրժողականություն, թշնամանք, բռնության կամ խտրականության կոչ կամ արդարացում պարունակող խոսքը:

Միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին

- Պատշաճ կերպով վերահսկել Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած ԼԳԲՏ+ անձանց իրավունքների վերաբերյալ միջազգային պարտավորությունների կատարման գործընթացը:
- Հանդես գալ պաշտոնական հայտարարություններով՝ ի աջակցումն ՀՀ-ում ԼԳԲՏ+ անձանց իրավունքների պաշտպանության կարևորության և առաջնայնության:
- Մարդու իրավունքներին առնչվող իրենց զեկույցներում անդրադառնալ սույն զեկույցում բարձրացված ԼԳԲՏ+ անձանց իրավունքների խախտումների ձևավորված պրակտիկային:
- Պետությունից պահանջել հստակ տեղեկատվություն հասարակական կազմակերպությունների կողմից տրամադրված մտահոգիչ գործերի քննության ընթացքի և ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին

- Բարձրացնել հասարակության տեղեկացվածության մակարդակը ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ խտրականության և դրանից բխող բացասական հետևանքների մասին, խտրականության բացառման կարևորության և հավասարության սկզբունքների վերաբերյալ:
- Բարձրացնել հասարակության տեղեկացվածությունը ատելության խոսքի և դրա քարոզչության հակաօրինականության մասին:
- Իրականացնել ջատագովություն Իրավահավասարության մասին արդյունավետ օրենք մշակելու և ընդունելու, ինչպես նաև՝ այլ իրավական փաստաթղթերում ԼԳԲՏ+ անձանց համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ սահմանելու համար:
- ԼԳԲՏ+ անձանց մարդու իրավունքների ոտնահարումների հայտնի դեպքերում հանդես գալ հրապարակային դատապարտող հայտարարությամբ, պատշաճ արձագանքել ահազանգերին:

Կազմակերպության մասին

«Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2007 թ.-ին, որը ԼԳԲՏ+ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանս և այլ ոչ հետերոնորմատիվ ինքություններով անձանց) համայնքահեն կազմակերպություն է, ստեղծվել է ԼԳԲՏ+ անձանց կողմից, ծառայում և աջակցում է համայնքի կարիքներին, ինչպես նաև խթանում է ԼԳԲՏ+ անձանց մարդու իրավունքների պաշտպանության գործընթացը ու ջատագովում ԼԳԲՏ+ հարցերի շուրջ հանրային քաղաքականության փոփոխությանը:

ARMENIA

«Փինք» իրավապաշտպան
հասարակական կազմակերպություն

info@pinkarmenia.org
+374 60 377277
pinkarmenia.org